

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ԳՐԻՆ ՌՈՂ»

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ԲՆՈՒՆԻՄԻ ԱՎԱԶԱԿՈՂՃԱՅԻՆ ԽԱՌՆՈՒՐԴԻ ԵՐԵՎԱԿՄԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ
ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՎՈՒԹՅԱՆ
ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ

Տնօրեն՝

Հ. Գաբրիելյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Էջ
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
1. ՆԱԽԱԳԾՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ-ԻՐԱՎԱԿԱՆ ՀԵՆՔԸ	4
2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	8
2.1. Նախատեսվող գործունեության վայրը	8
2.2. Նախատեսվող գործունեության բնութագիրը	12
3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱԿԻՐՃ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	16
3.1. Երկրաձևաբանություն, լանջերի թեքություն	16
3.2. Սելսմիկ կառուցվածք, արտածին երկրաբանական երևույթներ	19
3.3. Կլիմայական պայմաններ	21
3.4. Մթնոլորտային օդ	25
3.5. Ջրային ռեսուրսներ	25
3.6. Հողային ծածկույթ	27
3.7. Կենսաբազմազանություն	29
3.8. Բնության հատուկ պահպանվող տարածքներ	34
4. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ	39
5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐ	50
6. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ, ՉԵԶՈՔԱՅՄԱՆ ԵՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	55
7. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԾՐԱԳԻՐ	59
8. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ	62
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	64
Գծագրական հավելված 1.	65
Գծագրական հավելված 2.	66

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն նախնական գնահատման հայտը կազմվել է ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 48.1 հոդվածին համապատասխան:

Նախնական գնահատման հայտում ներկայացվում են հետևյալ տվյալները.

- նախատեսվող գործունեության ենթակա տարածքի շրջակա միջավայրի համառոտ նկարագիրը և իրադրության սխեման,
- նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ),
- շրջակա միջավայրի վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիրը,
- տեղեկատվություն հանրության ծանուցման, հանրային լսումների և տեղական ինքնակառավարման մարմինների նախնական համաձայնության վերաբերյալ:

Շրջակա միջավայրի համառոտ նկարագիրը կազմվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հուլիսի 29-ի նիստի թիվ 29 արձանագրային որոշման հավելված 1-ի պահանջներին համապատասխան և ներառում են հետևյալ տեղեկատվությունը.

1. ընդհանուր տեղեկություններ նախատեսվող գործունեության մասին, գործունեության բնութագիրը,
2. շրջակա միջավայրի (ռելիեֆ, երկրաձևաբանություն, կլիմա, մթնոլորտային օդ, ջրային ռեսուրսներ, հողեր, բուսական և կենդանական աշխարհ, վտանգված էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ) նկարագիրը,
3. սոցիալ-տնտեսական բնութագիրը (ենթակառուցվածքներ, հողերի տնտեսական յուրացման բնութագիր, պատմության և մշակութային հուշարձաններ),
4. շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների բնութագիրը,
5. բնապահպանական միջոցառումների բնութագիրը:

1. ՆԱԽԱԳԾՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ-ԻՐԱՎԱԿԱՆ ՀԵՆՔԸ

Բնունիսի երևակյան տարածքում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը կազմելիս ընկերությունն առաջնորդվել է բնապահպանական օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են հետևյալ իրավական ակտերում.

– ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրք (ՀՕ-280, 28.11.2011թ.), որով սահմանվում են ՀՀ տարածքում ընդերքօգտագործման սկզբունքներն ու կարգը, կարգավորվում են ընդերքն օգտագործելիս շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պաշտպանության, աշխատանքների կատարման անվտանգության ապահովման, ինչպես նաև ընդերքօգտագործման ընթացքում պետության և անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հետ կապված հարաբերությունները:

– ՀՀ Հողային օրենսգիրք (ՀՕ-185, 02.05.2001թ.), որը սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպական-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը:

– ՀՀ Ջրային օրենսգիրք (ՀՕ-373, 04.06.2002թ.), որով կարգավորվում են ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի տնօրինման, տիրապետման, օգտագործման և պահպանման ոլորտում ծագող հարաբերությունները:

– ՀՀ Անտառային օրենսգիրք (ՀՕ-211, 24.10.2005թ.), որը կարգավորում է ՀՀ անտառների և անտառային հողերի կայուն կառավարման՝ պահպանության, պաշտպանության, վերականգնման, անտառապատման և արդյունավետ օգտագործման, ինչպես նաև անտառների հաշվառման, մոնիթորինգի, վերահսկողության և անտառային հողերի հետ կապված հարաբերությունները:

– «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-22, 23.11.1999թ.), որը սահմանում է պետական քաղաքականությունը բնական բուսական աշխարհի գիտականորեն

հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում:

– «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-52, 03.04.2000թ.), որը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը:

– «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-121, 11.10.1994թ.), որի առարկան մթնոլորտային օդի մաքրության ապահովման, մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների նվազեցման ու կանխման բնագավառում հասարակական հարաբերությունների կարգավորումն է:

– «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-211, 27.11.2006թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները:

– «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-110, 21.06.2014թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները:

– «Թափոնների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-159-Ն, 07.01.2005թ.), որը կարգավորում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, ծավալների կրճատման և դրանց հետ կապված այլ հարաբերությունների, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման իրավական և տնտեսական հիմքերը:

– ՀՀ կառավարության 10.01.2013թ.-ի թիվ 22-Ն որոշում, որով սահմանվել են օգտակար հանածոների արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում

առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության ու առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման, դրանց իրականացման վճարների չափերի հաշվարկման և վճարման կարգերը:

– ՀՀ կառավարության 14.12.2017թ.-ի թիվ 1643-Ն որոշում, որը կիրառվում է Հայաստանի Հանրապետության տարածքում խախտված հողերի հաշվառման, հողաշինարարական, քարտեզագրման, կանխատեսվող ու իրականացման ենթակա ռեկուլտիվացման աշխատանքների նախագծման, ռեկուլտիվացման, ռեկուլտիվացված հողերի նպատակային նշանակության ուղղությունների որոշման, ինչպես նաև նպատակային ու գործառական նշանակությանը համապատասխան՝ դրանց հետագա օգտագործման ժամանակ:

– ՀՀ կառավարության 02.11.2017թ.-ի N1404-Ն որոշում, որով սահմանվել են հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և պակաս արդյունավետ հողերի բարելավման համար հողի բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները

– ՀՀ կառավարության 14.08.2014թ.-ի N781-Ն որոշում, որը սահմանում է Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման ընթացակարգը:

– ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N191-Ն որոշում, որը սահմանում է ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը :

– ՀՀ կառավարության 20.01.2005թ.-ի N64-Ն որոշում, որով հաստատվել են ջրակոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի և անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչները:

– ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի N 967-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բնության հուշարձանների ցանկը ըստ տեսակների և տեղադիրքի:

- ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի N71-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը:
- ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի N72-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բույսերի Կարմիր գիրքը:
- ՀՀ առողջապահության նախարարի 06.03.2002թ.-ի N138 հրաման, որով հաստատվում են աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում աղմուկի սանիտարական նորմերը:
- ՀՀ առողջապահության նախարարի 17.05.2006թ.-ի N533-Ն հրաման, որով հաստատվում են աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթռման հիգիենիկ նորմերը:
- ՀՀ կառավարության 30.08.2007թ.-ի N1045-Ն որոշում, որով սահմանվել է պետական անտառային հողերում անտառային տնտեսության վարման և անտառօգտագործման հետ չկապված աշխատանքների իրականացման կարգը:
- ՀՀ կառավարության 15.06.2017թ.-ի N676-Ն որոշում, որով հաստատվել են ՀՀ ընդերօգտագործման թափոնների կառավարման և վերամշակման պլանների օրինակելի ձևերը:
- ՀՀ կառավարության 08.09.2011թ.-ի N1396-Ն որոշում, որով սահմանվում են Հայաստանի Հանրապետության տարածքում հողի բերրի շերտի (այսուհետ՝ բերրի շերտ) նպատակային և արդյունավետ օգտագործման հետ կապված հարաբերությունները:
- ՀՀ կառավարության 21.10.2021թ.-ի N1733-Ն որոշում, որով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 69-րդ հոդվածով սահմանված՝ շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի օգտագործման և հատկացումների չափերի հաշվարկման հետ կապված հարաբերությունները:
- ՀՀ կառավարության 18.08.2021թ.-ի N1352-Ն որոշում, որով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 69-րդ հոդվածով սահմանված շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ընդերքօգտագործողների կողմից Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 3-րդ հոդվածով սահմանված ռեկուլտիվացիոն աշխատանքների՝ նախահաշվային արժեքների հաշվարկման և վերահաշվարկման կարգի հետ կապված իրավահարաբերությունները:

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2.1. Նախատեսվող գործունեության վայրը


Բնունիսի երևակումը գտնվում է Սյունիքի մարզի Սիսիանի տարածաշրջանում, Տոլորս գյուղից 1.9կմ հարավ-արևմուտք, Աշոտավան գյուղից 3.1կմ հարավ-արևելք, Ախլարթյան գյուղից 0.7կմ հյուսիս-հյուսիս-արևմուտք և Բնունիս գյուղից մոտ 1կմ հյուսիս-արևելք (նկարներ 1-3):

Վարչական տեսակետից ներառված է Սիսիան խոշորացված համայնքի Բնունիս և Ախլարթյան բնակավայրերի սահմաններում:

Մայրաքաղաքի հետ այն կապվում է 180 կմ ասֆալտապատ և մոտ 12կմ գրունտային ճանապարհներով:

Հայցվող մոտ 4.13հա մակերեսով տարածքը բնութագրվում է հետևյալ կոորդինատներով (ըստ ArmWGS 84 համակարգի).

1	4369084.0	8588250.0
2	4369170.0	8588247.0
3	4369255.0	8588231.0
4	4369440.0	8588222.0
5	4369466.0	8588237.0
6	4369982.0	8588216.0
7	4369992.0	8588242.0
8	4369931.0	8588254.0
9	4369890.0	8588237.0
10	4369874.0	8588262.0
11	4369787.0	8588278.0
12	4369657.0	8588253.0
13	4369624.0	8588252.0
14	4369583.0	8588242.0
15	4369559.0	8588252.0
16	4369514.0	8588292.0
17	4369268.0	8588297.0
18	4369068.0	8588283.0




Նկար 1.

ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ

(հատված K-38-137-Г-г թերթից)

Մասշտաբ 1 : 25 000

Կոորդինատային համակարգը՝ WGS-84 (ARMREF 02)



Պ Ա Յ Մ Ա Ն Ա Կ Ա Ն Ն Շ Ա Ն Ն Ե Ր

— Բնունիս ավազակոպճային խառնուրդի երևական սահմաններում երկրաբանահետախուզական աշխատանքների տարածք

Նկար 2.



Նկար 3.

Սյունիքի մարզը առմամբ հայտնի է զարգացած լեռնահանքային արդյունաբերությամբ: Մարզում գործող լեռնահանքային ձեռնարկություններից են Զանգեզուրի և Ագարակի պղնձամոլիբդենային, Շահումյանի ոսկի-բազմամետաղային կոմբինատները: Այստեղ են գտնվում նաև Լիճքվազ-Թեյի, Տերտերեսարի ոսկու հանքավայրերը, որոնց պաշարները հաստատվել և վերահաստատվել են ինչպես նախկին ԽՍՀՄ ՊՊՀ-ի, այնպես էլ ՀՀ ՕՀՊԳ-ի կողմից:

Շրջանը հարուստ է տարատեսակ շինարարական նյութերով, հիմնականում բազալտներով և անդեզիտաբազալտներով, հրաբխային խարամներով, ավազներով և այլն:

Շրջանը ապահովված է էլեկտրաէներգիայով, բոլոր բնակավայրերը էլեկտրաֆիկացված են: Տարածաշրջանում առկա են Սպանդարյանի, Տոլոսի, Շամբի և Բալաքի ջրամբարները, որոնց հենքի վրա կառուցվել են Շամբի, Շաքիի և Սպանդարյանի ՀԷԿ-երը:

Այստեղ առկա է բավականաչափ ազատ աշխատուժ:

2.2. Նախատեսվող գործունեության ընթացիկ

Բնունիսի երևակման տարածքը ներկայացված է ժամանակակից բերվածքային առաջացումներով՝ գլաքարերով, ավազներով, մեծաբեկորներով, կավերով, որոնք կապված են Այրիգետ գետի ողողամաշման գործունեության հետ:

Հետախուզման սահմաններում նախնական դիտարկումով դրանց հզորությունը հասնում է մոտավորապես 5.0-6.0մ, կազմելով միջինը երևակման սահմաններում 5.5մ: Երևակման սահմաններում հետախուզվող ԱԿԽ-ի կուտակը համատարած հիմնատակվում է այլուվիալ կավերով և ավազակավերով: Կավավազների մակերեսը հանդիսանում է օգտակար հանածոյի ստորին երկրաբանական սահման:

Ըստ նախնական դիտարկումների տվյալների օգտակար հաստվածքում կավային նյութի առանձին շերտեր չեն հանդիպում: Կավային նյութը ԱԿԽ-ում գտնվում է հիմնական զանգվածում ցրված փոշեացած վիճակում: Կավային մասնիկների գերակշռող մասը գտնվում է ավազային ֆրակցիայում:

Մակերեսային մերկացված մասի առանձին տեղերում նկատվում են կոպճի կամ ավազի գերակշռություն, ոսպնյակաձև ձգվում են մինչև 3-5մ և աստիճանաբար մարում են: Շատ փոքր տարածում ունեն մեծաքարերը որնց չափսերը տատանում են 0.30-0.40մ երբեմն 0.5մ սահմաններում և ներկայացված են անդեզիտաբազալտային, բազալտային և այլ ապարների բեկորներով: Բեկորային նյութը հիմնականում ներկայացված է ձվաձև, ոսպնյակաձև, սկավառակաձև, երբեմն գնդաձև տեսքերով:

Երևակման և դրան հարող տարածքներից տարիների ընթացքում բնակչության կարիքների համար իրականացվող արդյունահանման փորձը ցույց է տվել, որ այն կարելի է օգտագործել բոլոր տեսակի շինարարական աշխատանքներում:

Ըստ կատարված նախնական մակրոսկոպիկ դիտարկումների տվյալների երևակման ավազակոպճային խառնուրդի ֆիզիկամեխանիկական հատկությունները բավականին կայուն են, պետրոգրաֆիական(միներալոգիական) կազմերը համանման են:

Երկրաբանահետախուզական աշխատանքները նախատեսվում է իրականացնել երկրաբանահանույթային աշխատանքներով և հետախուզահորերի անցման և նմուշարկման աշխատանքների համալիրով:

Օգտակար հանածոյի որակական հատկությունները պետք է ուսումնասիրվեն ըստ ՀՍ ԲՕՇ 8267-95 «Խիճ և կոպիճ խիտ լեռնային ապարներից շինարարական աշխատանքների համար» և ՀՍ ԲՕՇ 8736-2014 «Ավազ շինարարական աշխատանքների համար» տեխնիկական պահանջների:

Մինչև նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմելը, անհրաժեշտ է ծանոթանալ ֆոնդային և հրատարակված նյութերին, ինչպես նաև գործող հրահանգներին և ԳՈՍ-երին:

Նախագծի կազմման համար կատարողների աշխատանքի ծախսը կազմում է.

I կարգի երկրաբան - 1 մարդ - 1.0 ամիս

երկրաբան –համակարգչային ձևավորող 1 մարդ - 0.5 ամիս:

Ընդամենը՝ - 2 մարդ - 1.5 ամիս:

Հանաձայն «Է՛նժոճոճոճո՛յ ի՛նճոճոճո՛ւթ իճոճո՛ւ է՛նճոճո՛ն ձճոճո՛ւ ձճոճո՛ւ ձճոճո՛ւ ձճոճո՛ւ ձճոճո՛ւ» հրահանգի պահանջների, աշխատանքների կազմակերպման ծախսերը կազմում են դաշտային աշխատանքների նախահաշվային արժեքի 1 տոկոսը:

Դաշտային աշխատանքների ավարտից հետո նախատեսվում են լուծարման աշխատանքներ, որոնց ծախսերը կազմում են դաշտային աշխատանքների արժեքի 0.8 տոկոսը:

Երևակման տարածքի երկրաբանական կառուցվածքի ճշտման, քարտեզագրման նպատակով նախատեսվում է երևակման տարածքում կատարել երկրաբանահանույթային աշխատանքներ: Երևակման 1:1000 մասշտաբի երկրաբանական քարտեզի կազմման համար անհրաժեշտ երկրաբանական երթուղիների ընդհանուր երկարությունը կկազմի մոտ 2.0 կմ:

Հետախուզահորերի անցման աշխատանքները կիրականացվեն մեխանիկական եղանակով՝ էքսկավատորի միջոցով: Նախատեսվում է 22 հետախուզահորերի անցում 5.0-ից մինչև 6.0 մետր խորության 121.0 մետր ընդհանուր ծավալով: Հետախուզահորերի ապարները համապատասխանում են հետևյալ կարգերին.

- ժամանակակից դելյուվիալ առաջացումներ – 4-րդ կարգ,

- ավազակոպիճ – 6-րդ կարգ:

Մանրամասն երկրաբանական փաստագրման ենթակա են բոլոր հետախուզահորերը: Երկրաբանական փաստագրման աշխատանքները նախատեսվում է կատարել 1:50 մասշտաբով: Այդ աշխատանքների ծավալը նախատեսվում է 121գծ.մ:

Նախատեսվում է հետախուզահորերի անցման ժամանակ դաշտային պայմաններում երեք կետում որոշել բնամասում ԱԿԽ-ի ծավալային զանգվածը, ինչպես նաև հումքի փխրեցման գործակիցը:

Ավագակոպճային խառնուրդը նախատեսվում է ուսումնասիրել որպես հումք շինարարական խճի և ավազի արտադրության համար:

Օգտակար հանածոյի որակական հատկանիշները պարզաբանելու համար նախատեսվում է վերցնել նմուշներ հետախուզահորերից: Նմուշների քանակը՝ 22 նմուշ, քիմիքական անալիզի համար 3 նմուշ և 2 նմուշ միներալոգո-պետրոգրաֆիական ուսումնասիրությունների համար:

Հետախուզահորերի անցման ժամանակ բնամասում ԱԿԽ-ի ծավալային զանգվածը, ինչպես նաև հումքի փխրեցման գործակիցը որոշելու համար նախատեսվում է վերցնել 3 նմուշ:

Վերցված նմուշները կենթարկվեն ֆիզիկամեխանիկական (լրիվ ցիկլով) փորձարկումների, ինչպես նաև 3 նմուշ քիմիական անալիզների և 2 նմուշ միներալոգո-պետրոգրաֆիական ուսումնասիրությունների համար մասնագիտացված լաբորատորիայում:

Նախատեսվում են նաև ռադիոմետրիական ուսումնասիրություններ՝ օգտակար հա-նածոյի ռադիացիոն-հիզիենիկ հատկությունների ուսումնասիրման նպատակով, որը կիրականացվի СРП-68-01 ռադիոմետրիական չափիչ սարքի միջոցով:

Երկրաբանահետախուզական աշխատանքների ընթացքում նախատեսվում է կատարել երևակման ինժեներաերկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանների ուսումնասիրություններ, որը կիրականացվի հետախուզահորերի անցման ընթացքում կատարվելիք դիտարկումներով: Անհրաժեշտության դեպքում վերոհիշյալ ուսումնասիրությունները կկատարվեն մասնագիտացված կազմակերպությունների հետ համագործակցելով:

Այս ծրագրով մոտեցող ճանապարհների շինարարական աշխատանքներ չի նախատեսվում, քանի որ երևակման տարածքում հարթ ռելիեֆը և դաշտամիջյան ճանապարհները բարվոք վիճակում են դաշտային աշխատանքները կազմակերպելու համար:

Ավագակոպճային խառնուրդի երևակումում նախատեսված երկրաբանահետախուզական աշխատանքների և օգտակար հանածոի լաբորատոր ուսումնասիրությունների ավարտից հետո (դրական արդյունքների դեպքում), նախատեսվում են աշխատանքային աշխատանքներ, որի ընթացքում.

- կամփոփվեն և կհամակարգվեն դաշտային փաստացի երկրաբանական նյութերը, լաբորատոր ուսումնասիրությունների արդյունքները,
- կտրվի հանքավայրի երկրաբանատնտեսագիտական գնահատականը,
- կկատարվի օգտակար հանածոի պաշարների հաշվարկը,
- կկազմվի երկրաբանական հաշվետվություն՝ հանքավայրի երկրաբանատնտեսական գնահատմամբ և պաշարների հաշվարկմամբ:

Կազմված հաշվետվությունը կներկայացվի ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ընդերքաբանական փորձաքննության համար:

Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ բեռների և ուղևորների փոխադրումը կկատարվի հիմնականում ասֆալտապատ և 0.5 կմ. հողածածկ ճանապարհներով:

Տրանսպորտային ծախսերն ընդունվում են դաշտային աշխատանքների նախահաշվային արժեքի 10 տոկոսի չափով:

Ընկերության կողմից ռեկուլտիվացիոն աշխատանքներ չի նախատեսվում, քանի որ հողաբուսական շերտը բացակայում է:

Հետախուզահորերի անցումից հետո համապատասխան փաստագրման և մնուշարկման աշխատանքների ավարտից հետո անմիջապես նախատեսվում է իրականացնել հետախուզահորերից համված 363.0մ³ (121մ x 3.0մ= 363.0մ³) լեռնային զանգվածի հետլցման աշխատանքները:

3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱԿԻՐՃ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

3.1. Երկրաձևաբանություն, լանջերի թեքություն

Բնունիսի երևակում գտնվում է Զանգեզուրի լեռնաշղթայի և Սյունյաց սարահարթի միացման հատվածում, Այրիգետ գետի հովտում, որը բնութագրվում է բլրային ռելիեֆով և 1900-2400 մ բացարձակ նիշերով:

Զանգեզուրի լեռները ձգվում է միջօրեականի ուղղությամբ մոտ 130 կմ՝ Ամուլսար լեռնագանգվածից մինչև Արաքսի հովիտը: Առանցքային մասը դեպի հարավ աստիճանաբար բարձրանում է և Կապուտջուղ լեռնագագաթում հասնում իր առավելագույն բարձրության (3904 մ): Կատարային գոտին քիչ է մասնատված: Առավել բարձր լեռնագագաթներն են՝ Նահապետ (3510 մ), Երնջակ (3364 մ), Շահապոնք (3204 մ), Սարվարդ (3162 մ), Գողթան (3143 մ), Այրիսար (3132 մ), Սիսկատար (3093 մ) և այլն: Լեռների հյուսիսային մասը համեմատաբար ցածր է (միջին բարձրությունը մոտ 2800 մ), լեռնանցքները (Որոտանի (2344 մ), Սիսիանի (2345 մ))՝ դյուրանցանելի, մինչև Այրիսար գոգածալքային հիմքի վրա ձևավորվել է անհամաչափ լանջերով ծալքաբեկորավոր, երոզային տեղատարումային, Այրիսար, Սարվարդ հատվածում՝ «շրջված» ռելիեֆ: Արևելյան լանջերն աստիճանակերպ իջնում են դեպի Որոտանի հովիտ և կտրտված են Շաղատի վտակների հովիտներով: Արևմտյան լանջերը խիստ մասնատված են Նախիջևանի և Երնջակի ու դրանց վտակների խոր, գառիթափ ձորերով, որոնց միջև պահպանված են համեմատաբար ցածրադիր (2200-2400 մ) լեռնաձյուղեր:

Լեռնաշղթայի հարավային մասը նորագույն տեկտոնական շարժումների հետևանքով բարձրացած հորստ է՝ կազմված Մեղրու պլուտոնի գրանիտոիդներից: Հարավային կեսի կենտրոնական հատվածն ունի ալպյան տիպի սրածայր, ատամնավոր գագաթներ (Կապուտջուղ, Սիսկատար, Փառական, Նահապետ, Երնջակ և այլն): Լեռնանցքները (3400-3600 մ բարձրություն) հազվադեպ են, դժվարանցանելի:

Բարձրլեռնային գոտուն բնորոշ են ռելիեֆի ձևասառցադաշտային ձևերը: Մեղրի, Ողջի, Քաջարանց, Գեղի և այլ գետերի ակունքներում կան պլեյստոցենյան սառցապատումների հետքեր՝ կառեր ու սառցադաշտային հովիտներ, որոնց մի մասը լցվել է ջրով, առաջացել են լճեր (Ղազանի, Կապույտ, Կապուտան, Քաջարանց և այլն): Հանդիպում են ձնաբծեր:

Հարավային լանջերը զառիթափ են, ժայռոտ ու մասնատված Արաքսի վտակներով: Կատարային մասում հին սառցադաշտային ձևերի հետ միաժամանակ մեծ չափերի են հասնում սառնամանիքային հողմահարումը, ծանրահակ ու էրոզային երևույթները:


Սյունիքի բարձրավանդակն իրենից ներկայացնում է բլրաթմբային սարահարթ է, որի միջին բարձրությունը՝ 2800-3200 մ, առավելագույնը՝ 3594մ (Թրասար): Տարածվում է հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք, երկարությունը՝ 120 կմ, լայնությունը՝ մինչև 50կմ (հյուսիսում): Մակերևույթին բնորոշ են բազմաթիվ հրաբխային կոները, կենտրոնական մասում են Ծղուկ (3581մ) և Մեծ Իշխանասար (3550մ) հրաբխային զանգվածները: Շատ են քարացրոնները, կան հնագույն սառցապատման հետքեր, փոքր ու փակ գոգավորություններ: Վերջիններից շատերը վերածվել են լճերի՝ Մեծ Փորակ, Փոքր Փորակ, Ալ, Սև և այլն:

Այրիգետը, որի էրոզիոն գործունեության հետ կապված է Բնունիսի ԱԿԽ երևակումը, վերին հոսանքում անցնում է խոր ձորով, իսկ Դաստակերտից սկսած աստիճանաբար լայնացող դարավանդավորված հովտով (Սիսիանի գոգավորություն): Գոգավորությունը գրավում է Որոտան, Այրիգետ և Սիսիան գետի հովիտները: Այն գտնվում է 1500-1600մ բացարձակ բարձրությունների վրա և ձևավորվել է սիսիանի դիատոմիտային հաստվածքի առաջացումներում, որտեղ Որոտանն ու դրա վտակները առաջացրել են մի շարք դարավանդներ: Գոգավորության ձախափնյա հատվածը լցված է Սյունիքի բարձրավանդակի միջին-վերին պլեյստոցենյան լավային հոսքերով, իսկ հարավ-արևելքում սահմանափակվում է Տաթև-Գորիսի տեկտոնական բարձրացումով:

Երևակման շրջանի երկրաձևաբանական և լանջերի թեքությունների սխեմատիկ քարտեզները ներկայացված են նկար 4-5-ում:

ԵՐԵՎԱՆԻ ԵՐԿՐԱԶԵՎԱԲԱՆԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԻ
ՄԽԵՄԱՏԻԿ ՔԱՐՏԵԶ

Կոորդինատային համակարգը՝ WGS-84 (ARMREF 02)




ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ
1 - Ներլեռնային նեղ միջին բարձրության /1200-2100մ/
թույլ թեքվածքներով զոգահովիտներ

Նկար 4.

**ԵՐԵՎԱՆԻ ՇՐՋԱՆԻ ԼԱՆՁԵՐԻ ԹԵՔՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՍԽԵՄԱՏԻԿ ՔԱՐՏԵԶ**

Կոորդինատային համակարգը՝ WGS-84 (ARMREF 02)




ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- 1 - Մեղմաթեք հարթավայրեր և լանջեր /5-14 աստիճան թեքությամբ/
- 2 - Զառիկող և թեք լանջեր /15-23 աստիճան թեքությամբ/
- 3 - Մեղմ կտրուկ լանջեր /24-29 աստիճան թեքությամբ/

Նկար 5.

3.2. Սեյսմիկ կառուցվածք, արտածին երկրաբանական երևույթներ,


Ըստ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. նախագծման նորմեր» N102-Ն հրամանի՝ հայցվող տարածքը գտնվում է 1-ին սեյսմիկ գոտում, որտեղ գրունտի հորիզոնական արագացման մեծությունը կազմում է 300 սմ/վ² կամ 0.3g (նկար 6):



Նկար 6.

Բնունիսի ԱԿԽ երևակման տարածքում արտաձին երկրաբանական երևույթների վերաբերյալ տեղեկատվության հիմք է հանդիսանում Հայաստանում սողանքների տեխնիկական տեղեկագիրը (Միջազգային համագործակցության ճապոնական գործակալություն, ՀՀ քաղաքաշինության նախարարություն, 2005):

Համաձայն նշված տեղեկագրի, երևակման հարակից շրջանում հայտնի սողանքային մարմինների տեղադիրքը ներկայացված է նկար 7-ում:



Նկար 7.

Սողանքային մարմինների բնութագրերը ներկայացված են ստորև, աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1.

Սողան- քային մարմնի ծածկագիրը	Սողանքային մարմնի կոորդինատները և բարձրությունը							Չափերը		
	Latitude N			Longitude E			Բարձրու- թյունը (մ)			
	Աստ.	Ըոպե	Վայրկ.	Աստ.	Ըոպե	Վայրկ.		լայն. (մ)	երկար. (մ)	մակերես (հա)
021-0030	39	27	56	46	0	32	1730	500	850	38
021-0130	39	27	2	46	1	46	1712	1450	540	44

Բուն հայցվող տարածքից 60-ից 205մ հեռավորության վրա, Այրիգետի հակառակ ափին գտնվում է 021-0030 սողանքային մարմինը, որը դասվել է վտանգավորության III-րդ դասին և համարվել են միջին ռիսկային:

3.3. Կլիմայական պայմաններ

Բնունիսի ԱԿԽ երևակման շրջանի կլիման բնութագրվում է որպես բարեխառն, տաք ամառով կլիմայական գոտի (նկար 8): Շրջանում գործում են երկու օդերևութաբանական կայաններ՝ Սիսիան (1580մ) և Սիսիանի լեռնանցք (2380մ):

Երևական շրջանի կլիման՝ կախված բարձունքային գոտիականությունից, փոփոխվում է բարեխառն տաքից մինչև ցուրտ: Ստորև աղյուսակներ 2-7-ում ներկայացված են շրջանի կլիմայական բնութագրերը:

Աղյուսակ 2.

Օդի ջերմաստիճանը

Դիտակայանը	Ջերմաստիճանը ըստ ամիսների, °C												Տարեկան միջին	Բացարձակ նվազ.	Բացարձակ առավել.
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII			
Միսիանի լեռնանցք	-8.2	-7.5	-4.3	1.3	6.3	9.9	12.7	12.8	9.9	4.7	-1.0	-5.9	2.6	-26	31
Միսիան	-4.5	-3.0	0.9	6.8	11.4	15.0	18.0	17.8	14.0	8.6	2.7	-2.2	7.1	-34	36


Աղյուսակ 3.

Մթնոլորտային տեղումները

Դիտակայանը	Տեղումները ըստ ամիսների, միջին ամսական/առավելագույն օրական մմ												Տարեկան
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
Միսիանի լեռնանցք	53	64	77	101	102	71	43	26	36	64	56	64	757
	23	37	27	91	50	41	48	34	31	47	41	45	91
Միսիան	18	22	36	57	73	57	27	16	23	37	30	18	414
	26	20	22	37	38	47	54	39	29	35	32	22	54

ԵՐԵՎԱՆԻ ՇՐՋԱՆԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՏՊԵՐԻ
ՄԽԵՄԱՏԻԿ ՔԱՐՏԵԶ

Կոորդինատային համակարգը՝ WGS-84 (ARMREF 02)



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- 1 - Բարեխառն, տաք ամառով կլիմայական գոտի
- 2 - Չափավոր ցուրտ կլիմայական գոտի

Նկար 8.

Աղյուսակ 4.

Ձնածածկույթը

Դիտակայանը	Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը	Ձյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ
Միսիանի լեռնանցք	36	67	90
Միսիան	214	157	720

Աղյուսակ 5.

Օդի հարաբերական խոնավությունը

Դիտակայանը	Ըստ ամիսների, %												Տարեկան միջին
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
Միսիանի լեռնանցք	81	83	83	77	76	77	76	72	71	71	76	81	77
Միսիան	71	71	71	70	71	69	65	65	70	71	73	72	70

Աղյուսակ 6.

Արևափայլը (ըստ Միսիան կայանի)

Բնութագիրը	Ըստ ամիսների												Տարեկան
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
Արևափայլի տևողությունը	158	157	167	174	237	292	319	303	261	203	160	148	2579
Առանց արևի օրերի թիվը	4	3	3	2	1	0.1	0.2	0.1	0.4	2	3	4	23

Աղյուսակ 7.

Քամիների ուղղությունների կրկնելիությունը (ըստ Միսիան կայանի)

Ամիսներ	Կրկնելիությունը, % Միջին արագությունը, մ/վ								Անհողմու- թյունների	Միջին ամսական արագությունը,	Միջին տարեկան արագությունը, մ/վ	Ուժեղ քամիներով օրերի քանակը, օր
	Ուղղությունները											
	Հս	Հս- Արլ	Արլ	Հվ- Արլ	Հվ	Հվ- Արմ	Արմ	Հս- Արմ				
հունվար	8	1	14	2	2	2	26	45	56	1.9	2.2	2
	3.5	2.6	3.6	2.5	2.5	3.5	3.6	3.9				
ապրիլ	4	2	36	6	2	6	25	19	55	2.0		
	3.4	3.2	4.1	3.7	3.4	4.0	3.6	3.9				
հուլիս	1	1	79	16	0	1	1	1	45	3.1		
	3.1	4.4	5.0	4.5	3.6	3.7	3.3	3.0				
հոկտեմբեր	2	2	53	7	2	6	20	8	65	1.6		
	2.7	2.8	4.2	3.2	2.9	3.9	3.7	3.8				

3.4. Մթնոլորտային օդ

Ավագակոյճային խառնուրդի երկրաբանական ուսումնասիրության համար ընտրված Բնունիս երևակման շրջանի տնտեսության հիմնական ճյուղը գյուղատնտեսությունն է: Հարակից Տոլորս, Բնունիս և Ախլաթյան գյուղերի բնակիչները զբաղվում են կերային, բանջարաբուստանային կուլտուրաների և կարտոֆիլի մշակությամբ, ինչպես նաև անասնապահությամբ, թռչնաբուծությամբ և մեղվաբուծությամբ:

Տարածքում չկան արդյունաբերական ձեռնարկություններ: Ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանման արտադրական գործունեություն իրականացնող կազմակերպություններ (բացահանքեր, քարի մշակման արտադրամասեր), սննդամթերքի արտադրության և սպասարկման ոլորտի ձեռնարկություններ կան Սիսիան և Անգեղակոթ բնակավայրերում՝ հայցվող տարածքից 7-ից 15կմ հեռավորության վրա:

Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից մթնոլորտային օդի որակի մշտադիտարկում հայցվող տարածքի շրջանում չի իրականացվում, ինչը վկայում է բարվոք էկոլոգիական իրավիճակի վերաբերյալ:

Երրակման տարածքի օդում 2022 թվականի մարտին կատարված դիտարկման արդյունքներով արձանագրվել են. փոշի՝ 0.08մգ/մ^3 , ծծմբի երկօքսիդ՝ 0.012մգ/մ^3 , ազոտի երկօքսիդ՝ 0.0064մգ/մ^3 և ածխածնի օքսիդ՝ 0.3մգ/մ^3 :

3.5. Զրային ռեսուրսներ


Երևակման շրջանի հիմնական ջրագրական միավորը Որոտան գետն է, Սյունիքի մարզի ամենախոշոր գետը: Այն Արաքսի ձախակողմյան վտակներից է և իր երկարությամբ երկրորդն է երկրում: Հայաստանի Հանրապետության սահմաններում նրա երկարությունը կազմում է 119կմ, ջրահավաք ավազանը՝ 2170կմ^2 , իսկ ջրահավաք ավազանի միջին բարձրությունը 2280 մետր: Որոտանը սկիզբ է առնում Սյունիքի հրաբխային բարձրավանդակի հյուսիս-արևմտյան լանջերից՝ 3045մ բարձրության վրա գտնվող երկու փոքրիկ լճերից: Որոտանն ունի զարգացած գետային ցանց, միջին խտությունը կազմում է 1.09 կմ/կմ^2 : Նրա ավազանում կան 1133 գետակներ, որոնցից 37-ը ունեն 10 կմ-ից ավել երկարություն: Կարևորագույն վտակներից են Սիսիանը, Գորիսգետը, Այրիգետը, Շաքին և այլն: Որոտանի սնումը ձևանձրևային է (52%), սակայն մեծ դեր ունեն նաև ստորերկրյա ջրերը, որոնց բաժինը գետի հոսքում կազմում է 48 %:

Որոտանի ջրային ռեժիմը բնորոշվում է զարնանային հոսքի գերակայությամբ՝ ամառային երբեմնակի վարարումներով: Հորդացումը տևում է ապրիլից մինչև հունիս,

իսկ առավելագույնին հասնում է մայիսին: Գետի միջին տարեկան ծախսը կազմում է 21.5մ³/վ, իսկ տարեկան հոսքի ծավալը՝ 677.3մլն.մ³: Որոտան գետը ունի մեծ ջրահներգետիկ և ոռոգիչ նշանակություն:

Բնունիսի երևակումը կապված է Միսիանի աջ օժանդակ՝ Այրիգետի գործունեության հետ: Այրիգետի երկարությունը 24 կմ է, ավազանը 171կմ²: Սկիզբ է առնում Բարգուշատի լեռնաշղթայի արևմտյան ծայրամասից 3060մ բարձրությունից, անցնում Դաստակերտ ավանի միջով, Ախլաթյան, Մորենի գյուղերի հարևանությամբ և թափվում Տոլորսի ջրամբարը: Հայցվող տարածքի տեղադիրքը Այրիգետի ժամանակակից հունի նկատմամբ ներկայացված է հավելված 1-ում: Վերին հոսանքում անցնում է խոր ձորով, իսկ Դաստակերտից սկսած աստիճանաբար լայնացող դարավանդավորված հովտով: Մնումը ձնաանձրևային է, տարեկան միջին ծախսը 1.48մ³/վրկ (Դաստակերտ), առավելագույնը՝ 11.6 մ³/վրկ, տարեկան հոսքը՝ 46.6³ մլն.մ:

ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվում է Միսիան քաղաքից վերև և ներքև: 2021 թվականի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսների տվյալներով Միսիան քաղաքից վերև ջրի որակը հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին գնահատվել է «միջակ» (3- րդ դաս), Միսիան քաղաքից ներքև հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս) (նկար 9):



Բնունիսի երևակման հատվածից կատարվել է Այրիգետ գետի ջրերի նմուշառում: Ջրերում արձանագրվել է ցինկ 71մկգ/լ, պղինձ 13մկգ/լ, նիկել 19.2մկգ/լ, մոլիբդեն 2.4մկգ/լ, մագնեզիում 42մկգ/լ, կոշտություն 5մգէկվ/լ:


3.6. Հողային ռեսուրսներ

Երևակման շրջանի հողային ծածկույթը ներկայացված է շագանակագույն և բաց-շագանակագույն քարքարոտ, հողմահարմած հողերով (նկար 10): Նախալեռնային գոտում տիպիկ չոր տափաստանային բուսականության տակ, հրաբխային ապարների հողմահարված նյութերի, ինչպես նաև տեղակուտակ, ողողաբերուկ և հեղեղաբերուկ գոյացումների վրա տարածված են մուգ շագանակագույն, մեծ մասամբ քարքարոտ, հողմահարված հողերը: Շագանակագույն-բաց-շագանակագույն հողերի մակերեսային քարքարոտությունը կազմում է մինչև 75%, որից 25%-ը՝ թույլ քարքարոտ, մոտ 34%՝ միջակ քարքարոտ, 16%-ը՝ ուժեղ քարքարոտ: Հողաշերտի հզորությունը միջին հաշվով տատանվում է 15-27սմ-ի սահմաններում, ռելիեֆի իջվածքային մասերում հաճախ այն հասնում է 35սմ-ի: Ըստ մեխանիկական կազմի այս հողերը դասվում են միջակ և ծանր կավավազային տարատեսակների շարքին: Կախված ռելիեֆի պայմաններից և էոզայի ենթարկվածության աստիճանից՝ հանդիպում են ինչպես ավելի թերև, այնպես էլ ծանր մեխանիկական կազմով հողեր: Հողերի բնութագրերը ներկայացված են աղյուսակ 8-ում:

Աղյուսակ 8.

Հողատիպը և ենթատիպը	Խորությունը, սմ	Տոկոսներով			Կլանված կատիոնների գումարը, մ/էկվ 100գ հողում	pH-ը ջրային քաշվածքում
		հումուս	CO ₂	գիպս SO ₄		
1	2	3	4	5	6	7
Շագանակագույն	0-15	3.2	1.4	0.0	33.1	7.9
	15-34	2.1	7.3	0.0	31.5	8.4
	34-73	1.6	16.5	0.1	30.1	8.3
	73-105	1.0	15.7	0.1	29.7	8.3
	105-155	0.8	17.7	0.1	25.8	8.4
Բաց-շագանակագույն	0-25	2.4	4.4	0.0	29.4	8.1
	25-39	1.4	8.4	0.5	28.8	8.4
	39-85	1.2	15.4	1.0	24.4	8.2

Բուն երևակման տարածքում հողաբուսական շերտ չկա: Բնունիսի երևակման տարածքը ներկայացված է Այրիգետի էոզոկոն գործունեության արդյունքում առաջացող ավազակոպճազլաքարային նստվածքների կուտակումներով:



Նկար 10.

3.7. Բուսական և կենդանական աշխարհ

Բնունիսի ԱԿԽ երևակման շրջանը բուսաշխարհագրական տեսակետից պատկանում է Բորեալ ֆլորիստիկ ենթաթագավորության Ցիրկումբորեալ գավառի Կովկասյան ենթագավառի Զանգեզուրի ֆլորիստիկ շրջանին:

Տարածքին յուրահատուկ է տափաստանային հացազգային, տարախոտա-հացազգային բուսականությունը: Տեղ-տեղ արտահայտված է նաև անտառային բուսականությունը (նկար 11):

Հայցվող տարածքում դիտարկվել են հետևյալ բուսատեսակները. *Thymus kotschyanus* Boiss. et Hohen. - Ուրց Կոչիի, *Artemisia absinthium* L. - Օշինդր դառը, *Hordeum violaceum* Boiss. et Huet - Գարի մանուշակագույն, *Festuca valesiaca* Gaudin - Շյուղախոտ վալլիսյան, *Urtica dioica* L. - Եղինջ երկտուն:

Ձորակային խոնավ հատվածներում և գետի ափի երկայնքով դիտարկվել են *Salix triandra* L. - Ուռենի եռառեչ, *Rosa spinosissima* L. - Մալբենի առատափուշ:


Աշոտավան և Տոլորս բնակավայրերի մոտ, երևակման տարածքից 0.35-2.1կմ հեռավորության վրա գտնվում են Սիսիանի անտառտնտեսության հողակտորները (նկար 12), որի կազմում կազմում ընդգրկված են երկու՝ Շաղատի՝ 2817,0հա և Սիսիանի՝ 3129,0հա մակերեսներով անտառպետությունները:

«Սիսիանի անտառտնտեսություն» մասնաձյուղի ընդհանուր տարածքը կազմում է 5946,0 հա: Անտառտնտեսությունում հիմնական անտառկազմող տեսակներն են խոշորառեչ կաղնին, որի գերակշռությամբ ծառուտները զբաղեցնում են 1636,4 հա՝ 74740,0մ³ ընդհանուր պաշարով, կամ անտառածածկ մակերեսի 78,4%-ը և ընդհանուր պաշարի 80,3%-ը:

Սոճու գերակշռությամբ ծառուտները զբաղեցնում են 115,8 հա, ընդհանուր պաշարը կազմում է 7810 մ³ (անտառածածկի 5,6%-ը և պաշարի 8,4%-ը): Գիհուտները կազմում է 119,0հա, 9800 խմ (անտառածածկ տարածքի 5,7%-ը և պաշարի 1,0%-ը) և մնացած տեսակները միասին կազմում են անտառածածկի 10,3%-ը և ընդհանուր պաշարի 1,3%-ը:

ԵՐԵՎԱՆԻ ՇՐՋԱՆԻ ԲՈՒՄԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏՊԵՐԻ
ՄԽԵՄԱՏԻԿ ՔԱՐՏԵԶ

Կոորդինատային համակարգը՝ WGS-84 (ARMREF 02)




ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- 1 - Տափաստանային հացազգային, տարախոտա-հացազգային բուսականությունը
- 2 - Գյուղատնտեսական նպատակներով օգտագործվող հողատարածքներ

Նկար 11.

ԱՆՏԱՌԱՅԻՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻ ՏԱՐԱԾՄԱՆ
ՄԻԵՄԱՏԻԿ ՔԱՐՏԵԶ

Կոորդինատային համակարգը՝ WGS-84 (ARMREF 02)



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

-  Աշոտավան գյուղի անտառային հողեր
-  Տոլորս գյուղի անտառային հողեր

Նկար 12.

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների կատարման նպատակով հայցվող տարածքում ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված տեսակների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով ուսումնասիրվել է ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N72-Ն որոշումը: Համաձայն այդ որոշման, երևակման շրջանում հայտնի են ՀՀ բույսերի կարմիր գրքում գրանցված հետևյալ բուսատեսակները.

Աղյուսակ 9.

Բուսատեսակը	Կարգավիճակը	Տարածումը	Առանձնահատկությունները	Պահպանության միջոցառումները
1	2	3	4	5
Գազ բեկված	Կրիտիկական վիճակում գտնվող	Աշոտական գյուղի շրջակայք, երևակման տարածքից մոտ 3կմ հեռավ. վրա	Միջին լեռնային գոտի, ծ.մ. 1500-1700մ բարձ. վրա, չոր մարգագետիններ, մարգագետնատափաստաններ	Չի իրականացվում
Գազ թրածն	Վտանգված	Դարբասի կիրճ, Շամբ գյուղի շրջակայք, երևակման տարածքից մոտ 6.5-8.5կմ հեռավ. վրա	Միջին լեռնային գոտի, ծ. մ. 1300-1800 մ բարձրությունների վրա. փափաստանում, չոր քարքարոտ լանջերին	Չի իրականացվում
Կորնգան մեսխեթական	Կրիտիկական վիճակում գտնվող	Շամբ գյուղի շրջակայք, երևակման տարածքից մոտ 8կմ հեռավ. վրա	Ստորին լեռնային գոտի, ծ. մ. 600-1400 մ բարձրությունների վրա. շիբլակում	Չի իրականացվում
Հիրիկ նեղգծային	Վտանգված	Միսիան քաղաքի, Վաղատին գյուղի շրջակայք, երևակման տարածքից մոտ 7-8.5կմ հեռավ. վրա	Ստորինից մինչև վերին լեռնային գոտիներում, ծ. մ. 800-2000 մբարձրությունների վրա. լեռնային տափաստանում, շիբլակում, մարգագետիններում, չոր քարքարոտ լանջերին	Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Շիկահող» պետական արգելոցի տարածքում
Կարծրածուտ Վորոնտվի	Վտանգված	Միսիան քաղաքի շրջակայք, երևակման տարածքից մոտ 7-8կմ հեռավ. վրա	Ստորին-միջին լեռնային գոտի, ծ.մ. 800-1700մ բարձրությունների վրա, չոր քարքարոտ, կավային, աղակալված հողերի, հղկված գլաքարերի, գետամերձ ավազանների վրա	Չի իրականացվում

Մատունի քարանձավային	Վտանգված	Դարաբազ գյուղից վերև, երևակման տարածքից մոտ 8.5կմ հեռավ. վրա	Ալպյան գոտի, ծ. մ. 2800-3400 մ բարձրությունների վրա, քարքարոտ խճաքարոտ զառիթափ լանջերին, քարաթափվածքներ ի և հրաբխային ապարների վրա	Չի իրականացվում
Գազ ցածր	Կրիտիկական վիճակում գտնվող	Սիսիան քաղաքի շրջակայք, երևակման տարածքից մոտ 7-8կմ հեռավ. վրա	Վերին լեռնային գոտի, ծ. մ. 1800 մ բարձրության վրա. չոր քարքարոտ լանջերին, մարգագետնատա-վաստանում	Չի իրականացվում

Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող Բնունիսի երևակման տարածքը ուսումնասիրվել է երթուղիներով՝ ՀՀ բույսերի կարմիր գրքում գրանցված տեսակներ հայտնաբերելու նպատակով: Երևակման տարածքում այս բուսատեսակները չեն դիտարկվել:

Բնունիսի երևակման տարածքում՝ գետի մոտ դիտարկվել է լճագորտ, իսկ քարացրոնների տարածքում՝ միջին մոդես: Նշվել է սովորական քարաթռչնակ, տնային ճնճղուկ, սովորական կաչաղակ: Կաթնասուններից արձանագրվել են աղվես, շնագայլ և գայլ, նապաստակ, դաշտամուկ: Հանդիպում են գնայուկ բզեզներ, ոսկեբզեզներ, զատիկներ, երկարաբեղիկների, փղիկներ:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների կատարման նպատակով հայցվող տարածքում ՀՀ կենդանիների Կարմիր գրքում գրանցված տեսակների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով ուսումնասիրվել է ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N71-Ն որոշումը: Համաձայն այդ որոշման, երևակման տարածքից մոտ 10-15կմ հեռավորության վրա, Դաստակերտ բնակավայրից հարավ հանդիպում է հայկական մուֆլոն: «Վտանգված» կարգավիճակ ունեցող այս կենդանատեսակի բաց բիոտոպերը (1000-3000մ ծ.մ.բ., չոր տափաստաններ, գիհու, նշենու և այլ չորասեր բուսականություն) խիստ տարբերվում են հայցվող տարածքի բնական լանդշաֆտներից:

Ըստ նույն որոշման, երևակման շրջանում հայտնի են կենդանիների կարմիր գրքում գրանցված հետևյալ տեսակները.

Տեսակը	Կարգավիճակը	Տարածումը	Պահպանության միջոցառումները
1	2	3	4
Սպիտակապուշ արծիվ	Վտանգված	Միսիանից ոչ հեռու՝ Որոտան գետի հովտում, երևակումից մոտ 6-9կմ հեռավ. վրա	Պահպանվում է «Սևան» ազգային պարկում
Պրոգերպինա իլիկաթիթեռ	Խոցելի	Միսիան քաղաքի շրջակայքում, երևակումից մոտ 6կմ հեռավ. վրա	Պահպանվում է «Խոսրովի անտառ» պետական արգելոցում
Կուզնեցովի երկրաչափ թիթեռ	Վտանգված	Միսիան քաղաքի շրջակայքում, երևակումից մոտ 6կմ հեռավ. վրա	Չի իրականացվում
Սիրիական սխտորագորտ	Խոցելի	Միսիանի տարածաշրջան	Չի իրականացվում

Տարածքը ուսումնասիրվել է երթուղիներով՝ ՀՀ կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակներ հայտնաբերելու նպատակով: Երևակման տարածքում վերը նշված կենդանական տեսակները չեն դիտարկվել:

3.8. Բնության հատուկ պահպանվող տարածքներ

Բնունիսի ԱԿԽ երևակման տարածքը ներառված չէ կամ սահմանակից չէ բնության հատուկ պահպանվող տարածքի սահմաններին: Երևակման տարածքից մոտ 15կմ արևելք-հարավ-արևելք է գտնվում «Զանգեզուր» պետական արգելավայրը, որը հիմնվել է ՀՀ կառավարության 15.10.2009թ.-ի թիվ 1187-Ն որոշմամբ Սյունիքի մարզի Բարգուշատի լեռնաշղթայի հարավային և Զանգեզուրի լեռնաշղթայի արևելյան լանջերին: Արգելավայրը ստեղծվել է մերձալպյան մարգագետնային և մարգագետնատափաստանային բնական էկոհամակարգերի լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, բնության եզակի հուշարձանների, բնական պաշարների բնականոն զարգացումը, պահպանությունը, պաշտպանությունը, վերականգնումը, վերարտադրությունը, ինչպես նաև բնական և ռեկրեացիոն ռեսուրսների կայուն օգտագործումն ապահովելու նպատակով:

Արգելավայրի հիմնական խնդիրներն են՝

- 1) արգելավայրի լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության բնականոն զարգացման ապահովումը և պահպանությունը.
- 2) վայրի բուսատեսակների և կենդանիների բնական միջավայրի պահպանությունը.

3) Զանգեզուրի և Բարգուշատի լեռնաշղթաների հարավային լեռնալանջերի վտանգված, կրիտիկական վիճակում գտնվող, խոցելի, անհետացման եզրին գտնվող, ինչպես նաև Հայաստանի Կարմիր գրքում ընդգրկված բույսերի և կենդանիների տեսակների պահպանությունն ու վերարտադրությունը.

4) գիտաճանաչողական և էկոլոգիական զբոսաշրջության իրականացման նախադրյալների ստեղծումը.

5) էկոլոգիական մոնիթորինգի կազմակերպման, բնության տարեգրության վարման և տարածաշրջանի բնության թանգարանի կազմակերպման համար բազայի ապահովումը.

6) բնակչության էկոլոգիական կրթության ու դաստիարակության համար համապատասխան նախադրյալների ապահովումը:

Երևակման տարածքից ավելի քան 21 կմ հեռավորության վրա է գտնվում «Գորիսի» պետական արգելավայրը, որն հիմնադրվել է 1972 թվականին: Արգելավայրը զբաղեցնում է 1850 հա տարածք, գտնվում է ՀՀ Սյունիքի մարզում, Որոտան գետի վտակ Վարարակնի ավազանում, ծովի մակարդակից 1400-2800 մ բարձրության վրա: Պահպանության օբյեկտներն են՝ անտառային լանդշաֆտներն ու դրանց բնորոշ կենդանական աշխարհը

Բնության հատուկ պահպանվող տարածքներ են նաև բնության հուշարձանները, որոնց ցանկը հաստատվել է ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի N967-Ն որոշմամբ:

ՀՀ Սյունիքի մարզում հաշվառված բնության հուշարձանների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը ներկայացված է աղյուսակ 11-ում:

Աղյուսակ 11.

Հուշարձանի անվանումը	Գտնվելու վայրը
1	2
«Սատանա» բնական քանդակ	Սյունիքի մարզ, Գորիս քաղաքից մոտ 1,0 կմ հս-արլ, Գորիս-Ստեփանակերտ խճուղու ձախ կողմում
«Անանուն» ժայռ-մնացուկներ	Սյունիքի մարզ, Գորիս քաղաքի շրջակայքում
«Անանուն» ռելիեֆի փոքր ձևեր	Սյունիքի մարզ, Միսիան քաղաքի հս-արլ եզրին
«Անանուն» ռելիեֆի փոքր ձևեր	Սյունիքի մարզ, Քաջարանի հանքային ջրի աղբյուրից հս-արլ, Ողջի գետի ձախ ափին
«Մալիի ինտրուզիա» ներժայթուկ	Սյունիքի մարզ, Մեղրիի ենթատարածք, Ալվանք գյուղից մոտ 1-1,5 կմ հս, լքված Մալն գյուղի մոտ
«Անանուն» ապարների մերկացումներ	Կմ Սյունիքի մարզ, Երևան-Միսիան խճուղու 180-181 կմ-ի ձախ և աջ կողմերում

1	2
«Խորձոր» V-աձև կիրճ	Սյունիքի մարզ, Խնածախ գյուղից 1.5-2.0 կմ հս-արլ
«Անանուն» երոզիոն ռելիեֆ	Սյունիքի մարզ, Խնածախ գյուղից 2,5 կմ հս-արլ, Բերձոր տանող ճանապարհի ձախ կողմում
«Անանուն» սյունաձև բազալտներ	Սյունիքի մարզ, Հալիձոր գյուղից 2 կմ արմ, Որոտանի կիրճում
«Անանուն» ապլիտային դայկաներ	Սյունիքի մարզ, Կապան քաղաքից 30-35 կմ հվ
«Հերթ» որմնաքանդակ	Սյունիքի մարզ, Միսիան քաղաքից 3 կմ հս-արմ, «Շաքի» ջրվեժի մոտ
«Փղի ճտեր» որմնաքանդակ	Սյունիքի մարզ, Կապան քաղաքից մոտ 25 կմ հվ, «Շիկահող» պետարգելոց տանող ճանապարհին
«Անանուն» սյունաձև բազալտներ	Սյունիքի մարզ, Որոտան գյուղի հվ-արմ եզրին
«Անանուն» սյունաձև բազալտներ	Սյունիքի մարզ, Որոտան գյուղի հվ-արմ եզրին
«Շիշբար» (Բաղաքար) դայկա	Սյունիքի մարզ, Բաղաքար գետի աջ և ձախ կողմերում
«Անանուն» բուրգանման մնացուկներ	Սյունիքի մարզ, Վերիշեն գյուղից 2 կմ հս, Գորիս-Խոզնավար ճանապարհի ձախ կողմում
«Սատանի կամուրջ» բնական կամուրջ	Սյունիքի մարզ, Տաթև գյուղից 2,5 կմ հս-արլ
«Բնական թունել»	Սյունիքի մարզ, Քարահունջ գյուղի մոտ, Գորիս-Կապան խճուղու վրա
«Ագարակի» բրածո ֆլորա	Սյունիքի մարզ, Ագարակ քաղաք
«Շամբի» բրածո ֆլորա և ֆաունա	Սյունիքի մարզ, Շամբ գյուղից 500 մ հս-արմ, Որոտան գետի ձախ ափին, 1300 մ բարձրության վրա
«Ծաղկարի» լիճ	Սյունիքի մարզ, Զանգեզուրի լեռնաշղթայի կատարային հատվածում, Ծաղկարի գետի վերնամասում, Քաջարան քաղաքից մոտ 10 կմ հվ-արմ, ծ.մ-ից 3271,5 մ բարձրության վրա
«Կապուտան» (Գոգի) լիճ	Սյունիքի մարզ, Քաջարան գետի ակունքներում, Քաջարան քաղաքից մոտ 5-6 կմ հվ-արմ, ծ.մ-ից 3202 մ բարձրության վրա
«Անտակ» լիճ	Սյունիքի մարզ, Բոնակոթ գյուղի Զարդով ջրամբարից 1 կմ հս-արմ
«Գազանա» լիճ	Սյունիքի մարզ, Գեղի գյուղի ակունքներում, Գեղի գյուղից մոտ 9 կմ հս-արլ, ծ.մ-ից 3111,8 մ բարձրության վրա
«Կապույտ» լիճ	Սյունիքի մարզ, Մեղրի գետի ակունքներում, Լիճք գյուղից մոտ 8 կմ հս-արմ
«Բերդալիճ» լիճ	Սյունիքի մարզ, Ծղուկ գյուղից 13 կմ հս-արլ, ծ.մ-ից 3005, 7 մ բարձրության վրա
«Կապուտջուղ» ջրվեժներ	Սյունիքի մարզ, Քաջարան քաղաքից 3.0 կմ արմ, Կապուտջուղ գետակի վրա

1	2
«Շինուհայր» ջրվեժ	Սյունիքի մարզ, Որոտան գետի ձախ կողմում, Հին Շինուհայրից 0.5 կմ հս-արմ
«Աղվան» ջրվեժ	Սյունիքի մարզ, Մեղրի գետի ձախ վտակ Մալև գետակի, լքված Մալև գյուղից 2.0 կմ հվ-արլ
«Վարդանիձոր» ջրվեժ	Սյունիքի մարզ, Վարդանիձոր գյուղից 2.5 կմ հս-արմ, Բերդաքար գետի Վարդանիձոր վտակի վրա
«Աջիբաջ» ջրվեժ	Սյունիքի մարզ, Գեղի գետի ձախակողմյան Աջիբաջ վտակի վրա, համանուն գյուղից 4 կմ հս-արմ
«Շաքի» ջրվեժ	Սյունիքի մարզ, Որոտան գետի ձախակողմյան Շաքի վտակի վրա
«Պառավաձոր» ջրվեժ	Սյունիքի մարզ, Բերդաքար գետի ձախակողմյան վտակի վրա, Վարդանիձոր գյուղից 3 կմ հս-արմ
Սբ. Վարդան եկեղեցու քարայր կացարանի և աղբյուրի համալիր	Սյունիքի մարզ, Անգեղակոթ գյուղից 0.5 կմ արմ, Անգեղակոթ-Շաղաթ ճանապարհից աջ
Արծվանիկ գյուղի բնական քարանձավներ	Սյունիքի մարզ, Արծվանիկ գյուղից 3 կմ հվ, Երիցավանքի շրջակայքում
«Որոտան» բնապատմական համալիր	Սյունիքի մարզ, Որոտան գյուղի հվ-արմ եզրին աջ ու ձախ ափերին
Հին Գորիսի («Կյորես») հրաբխային ապարներ	Սյունիքի մարզ, Գորիս քաղաքի արլ մասում, Վարաքակ գետի ձախ ափին
«Մեղրիի սոսի»	Սյունիքի մարզ, քաղ. Մեղրի
«Շիբլյակ»	Սյունիքի մարզ, Կապան քաղաք, Առաջաձոր տեղամասում, 800-900 մ բարձրության վրա
«Սֆազնումային մամուռներ»	Սյունիքի մարզ, Գոռայք գյուղից 5-6 կմ հս, Որոտանի լեռնանցքի մոտ
«Ջրաղացի» աղբյուրներ	Սյունիքի մարզ, Անգեղակոթ գյուղի հվ-արմ մասում, ծ.մ-ից 1770 մ բարձրության վրա
«Ծործոր» աղբյուրներ	Սյունիքի մարզ, Անգեղակոթ գյուղից 4 կմ հեռավորության վրա, Ծործոր գետի աջ ափին, ծ.մ-ից 1650 մ բարձրության վրա
«Վարդանաձորի» աղբյուրներ	Սյունիքի մարզ, Անգեղակոթ գյուղից 17 կմ հվ-արմ, Սիսիան-Նախիջևան ավտոճանապարհից 160 մ ներքև
«Սմբուլի» աղբյուր	Սյունիքի մարզ, Անգեղակոթ գյուղից հվ-արլ մասում, ծ.մ-ից 1740 մ բարձրության վրա
«Անապատի» աղբյուր	Սյունիքի մարզ, Անգեղակոթ գյուղի հարավային ծայրամասում, ծ.մ-ից 1840 մ բարձրության վրա
«Ջրաղացի» աղբյուր	Սյունիքի մարզ, Բարձրավան գյուղից 0.5 կմ հս-արմ, ծ.մ-ից 1350 մ բարձրության վրա

1	2
«Սևջուր» աղբյուր	Սյունիքի մարզ, Գեղի գյուղի հս ծայրամասում, Գեղի գետի ձախ ափին, ջրաղացի և կամրջի միջև, ծ.մ-ից 1600 մ բարձրության վրա
«Արքայից» աղբյուր	Սյունիքի մարզ, Դավիթ Բեկ գյուղի հս ծայրամասում, Քաշունի գետի կիրճի աջ ափին, ջրաղացի և կամրջի միջև, ծ.մ-ից 1065 մ բարձրության վրա
«Քյահրիզ» աղբյուր	Սյունիքի մարզ, Նոնաձոր գյուղից 1.5 կմ հս-արլ, ծ.մ-ից 670 մ բարձրության վրա
«Անանուն» աղբյուր	Սյունիքի մարզ, Շաքի գյուղի հս-արմ ծայրամասում, ծ.մ-ից 1685 մ բարձրության վրա
«Մեծ Նավի» աղբյուր	Սյունիքի մարզ, Շինուհայր գյուղից 0.5 կմ հս- արմ, ճամփեզրին, խաչքարի մոտ
«Որոտան» աղբյուր	Սյունիքի մարզ, Որոտան գյուղի հս ծայրամասում
«Կաթնաղբյուր» աղբյուր	Սյունիքի մարզ, Տանձավեր գյուղի հվ-արմ ծայրամասում, անտառի եզրին, Քաշունի գետի աջ ափին, ծ.մ-ից 1570 մ բարձրության վրա
«Սպիտակջուր» աղբյուր	Սյունիքի մարզ, Տանձատափ գյուղից 1.4 կմ հվ, անանուն գետակի ձախ ափին, ծ.մ-ից 1480 մ բարձրության վրա
«Շռան» աղբյուր	Սյունիքի մարզ, Քաշունի գյուղից 1.2 կմ հվ-արլ, ծ.մ-ից 1930 մ բարձրության վրա
«Ներքին» աղբյուր	Սյունիքի մարզ, Քարահունջ գյուղի հվ մասում, սողանքի մարմնի աջ կողմում, ծ.մ-ից 1250 մ բարձրության վրա

Երևակման տարածքում, ինչպես նաև մոտակա Ախլաթյան, Տոլորս, Բնունիս և Աշոտավան գյուղերի տարածքում բնության հուշարձաններ հաշվառված չեն :

Հայցվող տարածքից մոտ 15կմ հյուսիս-արևմուտք գտնվում է «Անտակ լիճ» բնության հուշարձանը, մոտ 13կմ հյուսիս՝ «Անանուն» աղբյուրը (Շաքի գյուղի հս-արմ ծայրամասում, ծ.մ-ից 1685 մ բարձրության վրա), մոտ 12կմ հյուսիս-արևմուտք՝ Շաքիի ջրվեժը և «Հերթ» որմնաքանդակը, մոտ 10կմ արևելք՝ «Շամբի» բրածո ֆլորա և ֆաունա հուշարձանը:

4. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

- **Ենթակառուցվածքներ**

Բնունիսի երևակման տարածքը վարչական առումով ընդգրկված է ՀՀ Սյունիքի մարզի տարածքում:

Սյունիքի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքի հարավում: Մարզը հյուսիսից սահմանակից է Վայոց ձորի մարզին, հարավից՝ պետական սահմանով սահմանակից է Իրանին (սահմանի երկարությունը 42 կմ է), արևմուտքից՝ Նախիջևանին և արևելքից՝ Արցախին: Սյունիքի մարզը զբաղեցնում է Զանգեզուր բնաշխարհի տարածքը, որը ներառում է Որոտան, Ողջի գետերի վերին ու միջին հոսանքների ավազանը և Զանգեզուրի՝ Մեծ Կովկասից հետո Հարավային Կովկասում ամենաբարձր լեռնաշղթայի, արևելյան լանջերը: Մարզի ամենաբարձր լեռնագագաթը Կապուտջուղն է (3 906 մ), իսկ ամենացածր վայրը՝ Մեղրու կիրճը (Արաքսի հովիտ 380մ): Ծովի մակերևույթից 3 250 մ բարձրության վրա՝ Կապույտ լճից սկիզբ է առնում Մեղրի գետը, իսկ Կապուտջուղ լեռան հալոցքաջրերից՝ Կապուտջուղ գետը, որի հետ Քաջարանց գետի միահյուսումից կազմավորվում է Ողջի գետը:

Սյունիքի մարզը, գրավելով ռազմավարական և աշխարհաքաղաքական նշանակության կարևոր դիրք, ունենալով բնահումքային հարուստ պաշարներ, արտադրական մեծ ներուժ և հանդիսանալով հանրապետության ամենախոշոր վարչական ու տնտեսական մարզերից մեկը, միաժամանակ մնում է համեմատաբար քիչ բնակեցված և տնտեսապես թույլ յուրացված, ինչը մասամբ պայմանավորված է մայրաքաղաքից ունեցած մեծ հեռավորությամբ և տրանսպորտային հաղորդակցության այլընտրանքային միջոցների բացակայությամբ:

Օգտակար հանածոներով ամենահարուստ մարզն է: Դրանցից կարևորագույններն են՝ 17 գունավոր (պղինձ, մոլիբդեն, ցինկ և այլ գունավոր) և թանկարժեք (ոսկի, արծաթ) մետաղների հանքաքարերը, ինչպես նաև ոչ մետաղային օգտակար հանածոների մի ամբողջ շարք (շինարարական և երեսապատման քարեր, բազալտային հումք, կրաքարի և այրվող թերթաքարերի, մարմարի, գրանիտի, պերլիտի և դիատոմիտների պաշարներ): Մարզի տնտեսության ընդհանուր ծավալում գերակշռողը արդյունաբերության և գյուղատնտեսության ոլորտներն են:

Մարզի արդյունաբերության հիմնական ճյուղը հանքարդյունաբերությունն է, սննդամթերքի և էլեկտրաէներգիայի արտադրությունը: Մարզում արտադրվող

Էլեկտրաէներգիայի գերակշիռ մասը բաժին է ընկնում Որոտանի ՀԷԿ-ի կասկադին: Գյուղատնտեսությունը հիմնականում մասնագիտացած է բուսաբուծության (մասնավորապես՝ հացահատիկային մշակաբույսերի և կարտոֆիլի արտադրություն) և անասնաբուծության (մասնավորապես՝ խոշոր և մանր եղջերավոր կենդանիների բուծում) մեջ:

Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային և Էլեկտրատրանս-պորտով (ճոպանուղի): Մարզի տարածքով է անցնում Հայաստանի Իրանի Իսլամական Հանրապետության հետ կապող ավտոմայրուղին, որն Էական դեր ունի մարզի տնտեսության զարգացման գործում: 2008թ. շահագործման է հանձնվել «Կապան-Ծավ-Մեղրի» ռազմավարական նշանակություն ունեցող ավտոմայրուղին, որը, որպես այլընտրանք «Կապան-Քաջարան-Մեղրի» միջպետական ճանապարհին՝ տեխնիկական ցուցանիշներով գերազանցում է վերջինիս: Մարզով են անցնում Արցախը Հայաստանին կապող կարևոր ավտոմայրուղին և Իրանի Իսլամական Հանրապետությունը ցամաքային անմիջական կապով Հայաստանին կապող միակ ճանապարհը:

Կապան քաղաքը (2021թ. տարեսկզբին՝ 42.0 հազ. մարդ) գտնվում է Խուստուփ լեռան ստորոտում (3201 մ), Երևանից 301 կմ հեռավորության վրա: Տնտեսության առաջատար ոլորտն արդյունաբերությունն է, ընդհանուր ծավալում գերակշռողը հանքարդյունաբերությունն է, որից կարևորագույններն են գունավոր և ազնիվ մետաղների արդյունահանումը: Որոշակի տեսակարար կշիռ ունեն նաև մշակող արդյունաբերությունը (սննդամթերքի, մանածագործական արտադրատեսակների ոչ մետաղական հանքային արտադրատեսակների, այլումինե և մետաղապլաստիկ իրերի, բնափայտի մշակման ու փայտե արտադրատեսակների, կահույքի և էլեկտրական արտադրության) և էլեկտրաէներգիայի արտադրությունը:

Քաջարան քաղաքը (2021թ. տարեսկզբին՝ 6.9 հազ. մարդ), գտնվում է Երևանից 326 կմ հեռավորության վրա, մարզկենտրոնից՝ 25 կմ:

ՀՀ գունավոր մետալուրգիայի կենտրոնն է՝ պղնձի և մոլիբդենի հզոր հումքային բազա հանդիսացող հազվագյուտ հանքավայրի շահագործման հիման վրա: Տնտեսության հիմնական և առաջատար ճյուղը հանքարդյունաբերությունն է: Քաղաքի տնտեսության մեջ իր բաժինն ունի նաև մշակող արդյունաբերությունը, որում 18 առանձնանում են սննդամթերքի և պատ-րաստի մետաղե արտադրատեսակների արտադրությունը:

Գորիս քաղաքը (2021թ. տարեսկզբին՝ 19.9 հազ. մարդ), գտնվում է Երևանից 236 կմ հեռավորության վրա, մարզկենտրոնից՝ 65 կմ, տնտեսության հիմնական ճյուղն արդյունաբերությունն է: Հիմնականում զարգացած են էլեկտրաէներգիայի արտադրությունը, սննդամթերքի, մանածագործական արտադրատեսակների, կարի, ալյումինե և մետաղապլաստիկ իրերի, բնափայտի մշակման ու փայտե արտադրատեսակների և էլեկտրասարքավորանքի արտադրությունները:

Սիսիան քաղաքը (2021թ. տարեսկզբին՝ 14.4 հազ. մարդ), գտնվում է Երևանից 201 կմ հեռավորության վրա, մարզկենտրոնից՝ 110 կմ, տնտեսության ծավալում գերակշռողն էլեկտրաէներգիայի արտադրությունն է, որոշակի տեսակարար կշիռ ունեն նաև այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների և սննդամթերքի արտադրությունները:

Դաստակերտ քաղաքը (2021թ. տարեսկզբին՝ 0.3 հազ. մարդ), գտնվում է Երևանից 221 կմ հեռավորության վրա, մարզկենտրոնից՝ 130 կմ: Աշխատանքներ են տարվում պղնձի և մոլիբդենի հանքերը վերագործարկելու համար:

Մեղրի քաղաքը (2021թ. տարեսկզբին՝ 4.2 հազ. մարդ), գտնվում է Երևանից 376 կմ հեռավորության վրա, մարզկենտրոնից՝ 75 կմ, տնտեսության ընդհանուր ծավալում գերակշռողը մշակող արդյունաբերությունն է: Որոշակի տեսակարար կշիռ ունեն էլեկտրաէներգիայի և մրգերի պահածոների ու հյութերի արտադրությունը:

Ագարակ քաղաքը (2021թ. տարեսկզբին՝ 4.1 հազ. մարդ), գտնվում է Երևանից 388 կմ հեռավորության վրա, մարզկենտրոնից՝ 87 կմ, տնտեսության առաջատար ոլորտը հանքարդյունաբերությունն է, որից կարևորագույնը գունավոր մետաղների արդյունահանումն է: Քաղաքի տնտեսության զարգացումը կապված է պղնձամոլիբդենային արտադրության հետ: Ագարակում են գտնվում Հայաստան-Իրան սահմանային և մաքսակետերը:

2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ Սյունիքի մարզի ամբողջ բնակչությունը կազմել է 135.8 հազ.մարդ, որից քաղաքային բնակչությունը՝ 91.8 հազ.մարդ, գյուղականը՝ 44.0 հազ.մարդ:

Արդյունաբերական արտադրանքը 2021թ.-ի հունվարի 1-ի դրությամբ կազմել է 359754.9 մլն.դրամ, արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը՝ 102.8%: Ըստ արդյունաբերական արտադրանքի ծավալը ըստ արտադրության բաժինների ներկայացված է հետևյալ կերպ.

- հանքագործական արդյունաբերություն – 301645.8 մլն.դրամ,
- մշակող արդյունաբերություն – 32924.3 մլն.դրամ,

- էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում – 24019.9մլն.դրամ,
- ջրամատակարարում, կոյուղի և թափոնների կառավարում և վերամշակում – 1164.9մլն.դրամ:

Արդյունաբերական արտադրանքի արտադրությունն ըստ տնտեսական գործունեության տեսակների ներկայացված է ստորև աղյուսակ 17-ում:

Գյուղատնտեսական համախառն արտադրանքում բուսաբուծությունը կազմում է 12.7մլն.դրամ, անասնաբուծությունը՝ 41.7մլն.դրամ:

Հացահատիկային և հատիկալնդեղենային մշակաբույսերի ցանքսատարածությունները կազմել են 14440հա, բերքատվությունը՝ 15.6g/հա, համախառն բերքը՝ 22.2հազ.տոննա:

Կարտոֆիլի ցանքսատարածությունները կազմել են 1128հա, բերքատվությունը՝ 149.8g/հա, համախառն բերքը՝ 16.9հազ.տոննա:

Բանջարանոցային մշակաբույսերի ցանքսատարածությունները կազմել են 604հա, բերքատվությունը՝ 98.3g/հա, համախառն բերքը՝ 5.9հազ.տոննա, բոստանային կուլտուրաների համար համապատասխանաբար՝ 8հա, 146.2g/հա, 0.1հազ.տ: Պտղի և հատապտղի տնկարկների համար այդ ցուցանիշները կազմում են համապատասխանաբար 2627հա, 34.4g/հա և 8.9հազ.տոննա, խաղողի տնկարկների համար՝ 179հա, 30.5g/հա և 0.5հազ.տոննա:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻՆ
PRODUCTION OF INDUSTRIAL OUTPUT BY TYPES OF ECONOMIC ACTIVITY, 2020

	Թողարկ- ված ար- տադրանքի ծավալը, ընթացիկ գներով, ¹ մլն.դրամ Volume of produced production, in current prices ¹ , mln.drams	Պատրաստի արտադ- րանքի իրացումը, ընթացիկ գներով, ¹ մլն.դրամ Realisation of fabricated products in current prices ¹ , mln.drams	Արտա- դրանքի ֆիզիկա- կան ծավալի ինդեքսը, % Volume index of of industrial production, %	
ՄՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ SYUNIK MARZ				
Ամբողջ արդյունաբերությունը	359 754.9	356 036.0	102.8	Total industry
այդ թվում՝				including:
Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում	301 645.8	297 917.8	105.1	Mining and quarrying
այդ թվում՝				including:
մետաղական հանքաքարերի արդյունահանում	300 423.0	297 366.2	105.1	mining of metal ores
հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման այլ ճյուղեր	1 201.0	529.8	112.9	other mining and quarrying
հանքագործական արդյունաբերության հարակից գործունեություն	21.8	21.8	23.9	mining support service activities
Մշակող արդյունաբերություն	32 924.3	32 934.9	101.9	Manufacturing
որից՝				of which:
սննդամթերքի արտադրություն	27 788.7	27 847.6	101.7	manufacture of food products
խմիչքների արտադրություն	304.8	355.4	69.0	manufacture of beverages
մանածագործական արտադրատեսակների արտադրություն	144.2	137.1	93.2	manufacture of textiles
հագուստի արտադրություն	55.9	55.9	74.6	manufacture of wearing apparel
քիմիական նյութերի և քիմիական արտադրատեսակների արտադրություն	111.8	111.8	103.8	manufacture of chemicals and chemical products
ռետինե և պլաստմասսայե արտադրատեսակների արտադրություն	129.5	129.5	79.4	manufacture of rubber and plastic products
այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն	2 801.4	2 816.4	99.5	manufacture of other non-metallic mineral products
պատրաստի մետաղե արտադրա- տեսակների արտադրություն. բացի մեքենաներից և սարքավորանքից	735.1	735.1	170.5	manufacture of fabricated metal products. except machinery and equipment
Էլեկտրական սարքավորանքի արտադրություն	531.4	531.4	82.7	manufacture of machinery
Էլեկտրականության, գազի, ջրորոշու և լավորակ օդի մատակարարում	24 019.9	24 019.9	81.8	Electricity, gas, steam and air conditioning supply
Ջրամատակարարում, կոյուղի, թափոն- ների կառավարում և վերամշակում	1 164.9	1 163.3	100.4	Water supply, sewerage, waste management and remediation activities

Խոշոր եղջերավոր անասունների քանակը կազմել է 52.3հազ.գլուխ, որից կովերինը՝ 23.1հազ.գլուխ, խոզերինը՝ 11.4հազ.գլուխ, ոչխարներ և այծեր՝ 93հազ.գլուխ, ձիեր՝ 2.3հազ.գլուխ:

Մանրածախ առևտրի շրջանառությունը կազմել է 25875.9մլն.դրամ, ծառայությունների ծավալը՝ 24897.2մլն.դրամ, կացության և հանրային սննդի օբյեկտների շրջանառությունը՝ 920.8մլն.դրամ, առողջապահությունն ու բնակչության սոցիալական

սպասարկումը՝ 590.2մլն.դրամ, ֆինանսական և ապահովագրական գործունեությունը՝ 17571.1մլն.դրամ:

Գործազուրկների թիվը կազմել է 8.8հազ.մարդ, որից կանայք՝ 6.0հազ.մարդ: Մարզում միջին ամսական անվանական աշխատավարձը եղել է 130134դրամ:

Կենսաթոշակառուների գրանցված քանակը՝ 22780 մարդ, կենսաթոշակի միջին չափը՝ 46269դրամ:

Նախադպրոցական հաստատությունների քանակը կազմել է 56, հաճախող երեխաների քանակը՝ 3903, մանկավարժների քանակը՝ 475, մեկ մանկավարժիման ընկնող երեխաների թվաքանակը՝ 8.2:

2020/2021 ուսումնական տարում Սյունիքի մարզում գործել է 118 հանրակրթական դպրոց, աշակերտների թվաքանակը 16448, մանկավարժների թվաքանակը՝ 2199, մեկ մանկավարժին ընկնող աշակերտների թվաքանակը՝ 7.5:

Երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցների, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնների քանակը 2020/2021 ուսումնական տարում կազմել է 18, աշակերտների թվաքանակը՝ 2634:

Գործել են նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական 5 հաստատություններ, դրանցում կրթվել են 355սան, աշխատել են 58 մանկավարժ:

Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների քանակը կազմել է 7, ուսանողների թվաքանակը՝ 1013, մանկավարժների թվաքանակը՝ 262, ուսանողների թվաքանակը մեկ մանկավարժի հաշվով՝ 3.9:

Սյունիքի մարզում գործում է երկու բարձրագույն ուսումնական հաստատություն, որտեղ կրթություն են ստանում 1718 ուսանող և աշխատում են 192 հոգի պրոֆեսորադասախոսական անձնակազմ:

Գործում են 2 թատրոն, 4 թանգարան և 81 գրադարան: 11 մարզական կազմակերպություններում մարզվում են 1787 մարզիկ, օլիմպիական մարզաձևերով խմբերի քանակը՝ 124, ոչ օլիմպիական մարզաձևերով՝ 23:

▪ ***Հողերի տնտեսական յուրացման բնութագիր***

Բնունիսի երևակման հայցվող տարածքը ներառված է Սիսիան խոշորացված համայնքում (Բնունիս և Ախլաթյան բնակավայրերի վարչական տարածք):

Միսիան բազմաբնակավայր համայնքը կազմավորվել է «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ 2017 թվականի հունիսի 9-ի ՀՕ-93-Ն օրենքի համաձայն, Միսիանի տարածաշրջանի 30 համայնքների միավորման արդյունքում, տարածքը կազմում է 123384 հա:

Միսիանի համայնքում տնտեսության ծավալում գերակշռողն էլեկտրաէներգիայի արտադրությունն է, որոշակի տեսակարար կշիռ ունեն նաև սննդամթերքի և այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրությունները: Համայնքում զարգացած է գյուղատնտեսությունը, որտեղ գերակշռող ծավալը բաժին է ընկնում անասնապահությանը, հացահատիկային մշակաբույսերի և կարտոֆիլի աճեցմանը:

- Էլեկտրաէներգիա արտադրություն փոքր ՀԷԿ-երի միջոցով
- Քարի արտահանում և վերամշակում
- Կաթի և կաթնամթերքի արտադրություն
- Հացի և հացաբուլկեղենի արտադրություն
- Զովացուցիչ ըմպելիքների և պահածոների արտադրություն

Միսիանի տարածաշրջանը հանրապետությունում հայտնի է եղել հացահատիկային մշակաբույսերի համախառն բերքի և անասնապահական մթերքների արտադրությամբ, որը գերակշիռ դեր ուներ հանրապետությունում: Բնակչության շուրջ 80% զբաղվում է գյուղատնտեսությամբ, բնակչության կողմից մշակվող հողատարածքների չափերը տարբեր են՝ սկսած 100քմ փոքրիկ հողակտորներից, մինչև 25-30հա: Հիմնական մշակաբույսերն են ցորեն, գարի, հաճար, կարտոֆիլ, կաղամբ և այլ բանջարաբոստանային կուլտուրաներ: Գյուղատնտեսության զարգացման և հողերի արդյունավետ մշակության գործում լուրջ խոչընդոտ է հողերի մասնատվածությունը, որը ավելի ծախսատար և աշխատատար է դարձնում գյուղատնտեսությունը: Կաթի վերամշակմամբ զբաղվող փոքր արտադրամասերը տեղական հումքի վրա արտադրում են պանիր, թթվասեր, մածուն, կաթնաշոռ և այլն: Համայնքում գործում է 1 ավագ, 15 հիմնական, 15 միջնակարգ և 1 տարրական դպրոցներ, 6 արտադպրոցական հաստատություններ, 4 նախակրթարաններ, ՀԱԱՀ-ի մասնաճյուղ, 1 քոլեջ և 1 աջակցման կենտրոն:

Համայնքի հողային ֆոնդը 03.11.2020թ. դրությամբ ներկայացված է հետևյալ կերպ.

NN	Նպատակային նշանակությունը	Հոդատեսքը, գործնական նշանակությունը	Ընդամենը, հա
1	2	3	4
1.1	Գյուղատնտեսական	վարելահող	18012.36
1.2		բազմ. տնկարկ	185.47
1.3		խոտհարք	2033.62
1.4		արոտ	57985.41
1.5		այլ հողատեսք	34142.02
		Ընդամենը	112358.87
2.1	Բնակավայրերի	բնակելի	1554.87
2.2		հասարակական	109.89
2.3		խառը	7.23
2.4		ընդհանուր	335.66
2.5		այլ հողեր	695.26
		Ընդամենը	2702.90
3.1	Արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակ.	արդյունաբերության	28.89
3.2		գյուղատնտեսական	242.01
3.3		պահեստարանների	1.65
3.4		ընդերքի	1935.97
		Ընդամենը	2208.52
4.1	Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառ.	էներգետիկայի	100.65
4.2		կապի	5.30
4.3		տրանսպորտի	115.14
4.4		կոմունալ	15.91
		Ընդամենը	237.01
5.1	Հատուկ պահպանվող տարածքների	բնապահպանական	200
5.2		առողջարական	
5.3		հանգստի	2.26
5.4		պատմական և մշակութ.	406.45
		Ընդամենը	608.71
6.	Հատուկ նշանակության		205.45
7.1	Անտառային	անտառ	3322.30
7.2		թփուտ	354.03
7.3		վարելահող	
7.4		խոտհարք	4.66
7.5		արոտ	321.37
7.6		այլ հողեր	107.13
		Ընդամենը	4109.49
8.1	Ջրային	գետեր	326.32
8.2		ջրամբարներ	544.23
8.3		լճեր	23.61
8.4		ջրանցքներ	49.59
8.5		հիդրոտեխ. կառույց	5.72
8.6		Ընդամենը	949.47
	ԸՆԴԱՄԵՆԸ ՀՈՂԵՐ		123380.42

Ավագակոպճային խառնուրդի երկրաբանական ուսումնասիրության համար հայցվող տարածքը ներառված է Միսիան խոշորացված համայնքի Բնունիս և Ախլաթյան բնակավայրերի սահմաններում: Ներկայացված է գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայրերով և «այլ» գործառնական նշանակության հողերով:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նախնական հայտը ներկայացվել է համայնքի բնակիչներին:

Քննարկվել է աշխատատեղերի ստեղծման, ինչպես նաև ընկերության կողմից համայնքին սոցիալ-տնտեսական աջակցության հնարավոր ծրագրերի հարցը :

Կից ներկայացվում են քննարկման տեսաձայնագրությունը և արձանագրությունը :

▪ Պատմության, մշակութային հուշարձաններ

ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2322-Ն և 2007 թվականի մարտի 15-ի թիվ 385-Ն որոշումներով հաստատվել է ՀՀ Սյունիքի մարզի պատմության և մշակութային անշարժ հուշարձանների պետական ցուցակը: Բնունիս և Ախլաթյան բնակավայրի տարածքում հաշվառված են հետևյալ պատմության և մշակութային հուշարձանները.

Աղյուսակ 14.

Համարը, ենթահամարը			Հուշարձանը	Ժամանակաշրջանը	Գտնվելու վայրը	Վիճակը
1	2	3	4	5	6	7
1			ՊՕԾ ¹ / ₄ Ք ² Աձ	ձԾԾ ՍՇԸ-Կ ³¹³ ճ	·ՍձԾՕՇՕ Սձի 500 Ս Ու	
2			ՊՍձԾՕՇՕՇՕՇ ԶԷԷ ² ԱՍ ² Ս	ՍՇԸԿ ³¹³ ճ- 20 ¹ .	·ՍձԾՕՇՕ Սձի 500 Ս ³ Ս, ² ՍճԸ·»ՎՇ ³ Շ ³ Կ	³ ի»ճի»Է Շ 1931 Ա. »ճիճ ³ ՅճԱՇՕ
	2.1		Պ»ճ» ¹ / ₂ Ս ³ Կձ	11-19 ¹¹ .	·ՍձԾՕՇՕ»ՕՇԸ թ. թ ³ ճ·ՇԷ »Վ»Օ»ձձձ Ու ³ Ս	³ ի»ճիճ Շ
		2.1.1	Է ³ ձն ³ ճ	11 ¹ .		ԱԿՎ Շ
	2.2		Պ»ճ» ¹ / ₂ Ս ³ Կձ	ՍՇԸԿ ³¹³ ճ-20 ¹ . թՎ ¹ / ₂ Ս	·ՍձԾՕՇՕ»ՕՇԸ թ. թ ³ ճ·ՇԷ »Վ»Օ»ձձձ Սձի 100 Ս ³ », ՍճՕձձԿ իճ ³	
		2.2.1	Է ³ ձն ³ ճ	9-10 ¹¹ .		ԱԿՎ Շ
		2.2.2	Է ³ ձն ³ ճ ^ա	1003 Ա.		
		2.2.3	Է ³ ձն ³ ճ ՕճՇՍՇ	11-12 ¹¹ .		ԱԿՎ Շ
		2.2.4	Րձ ³ Կ ³ Սճ	1674 Ա.		ՍճՕճ Շ, ձՎ»- ճ ³ Ս ³ Կ ³ Սճ»ճի
		2.2.5	Րձ ³ Կ ³ Սճճ ^ա ՊճԸ·ձճԸ	1581 Ա.		Սճիձձձձձձ Շ, Վ»ՕճՍճ
		2.2.6	Րձ ³ Կ ³ Սճճ ^ա ՐձՕՍՇ	1601 Ա.		ՍճՕճ Շ, ձՎ»- ճ ³ ՍճՍճճճ»ճի

1	2	3	4	5	6	7
	2.3		Պրն»½Ս³Կáó	17-19 ¹¹ .	·ՍáðÕ³»ÕÇÇ êմ. ê³ñ·Çê »İ»Õ»óáðó Òáí 80 Ù Ñê, մÉñÇ íñ³	³í»ñí³ և
		2.3.1	É³áù³ñª Ø³ñíÇñáêÇ · Խ³ՍÝ³ՍÇ	1674 Ա.		
	2.4		Պ»Õ»óÇ êմ. ê³ñ·Çê	17 ¹ .		ÍÇê³í»ñ և
		2.4.1	É³áù³ñ	16-17 ¹¹ .	»İ»Õ»óáð Ò»Ç	
		2.4.2	É³áù³ñ	16-17 ¹¹ .	»İ»Õ»óáð Ò»Ç	
3			ՊՍáðÕ³ºÕÆ ²ð²àðê	ՍÇԿÝ³·13ñ	·ՍáðÕÇó 2 ÍÙ Ñí, ²ՍñÇ·»íÇ Ó³É ³÷ÇÝ	³í»ñí³ և
	3.1		Պրն»½Ս³Կáó	ՍÇԿÝ³·13ñ	·ՍáðÕ³»ÕÇáðÙ, մÉñÇ .3.3ԱÇÝ	Ս»Í և, ³í»ñí³
		3.1.1	É³áù³ñ	10 ¹ .		ÁÝí³ և
		3.1.2	É³áù³ñ	11-12 ¹¹ .		ÁÝí³ և
	3.2		Պրն»½Ս³Կáó	ՍÇԿÝ³·13ñ	·ՍáðÕ³»ÕÇáðÙ, ÁՍմԿ íñ³	÷áùñ և, ³í»ñí³
		3.2.1	É³áù³ñ	10 ¹ .		ÁÝí³ և
		3.2.2	É³áù³ñ	10 ¹ .		ÁÝí³ և

Բնունիս բնակավայրի պատմամշակութային հուշարձանների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է աղյուսակ 15-ում:

Աղյուսակ 15.

Համարը, ենթահամարը			Հուշարձանը	Ժամանակաշրջանը	Գտնվելու վայրը	Վիճակը
1	2	3	4	5	6	7
1			Պºð¹¼Ø²Սáð	10-20 ¹¹ .	·ՍáðÕÇ Ñê »½ñÇÝ	áñՍÝ³÷³Í և, ×³ñí· ՊñÇ·áñÇÍ í³ñ¹á»Í. í»ñÇÝÇê Ò³í³· ñáðÁՍáðԿÁ íñáÕ Բ³ñí³íùÇ ò³ñ»ñÇó Ù»ÍÁ Ñ»í³·ՍáðÙ ù·í³·áñí»É և áñá»ê ԲÇñՍ³ù³ñ
	1.1		É³áù³ñ	12-13 ¹¹ .		
	1.2		É³áù³ñ	1331 Ա.		
	1.3		É³áù³ñª Á³íáñ	16-17 ¹¹ .		μ»Íáñ
	1.4		Դ³á³Կ³ù³ñ	1422 Ա.	áñՍÝ³÷³Í É³áù³ñÇ Սáí	Ñ³ñÁ
	1.5		Դ³á³Կ³ù³ñ	1549 Ա.	áñՍÝ³÷³Í É³áù³ñÇó ՍÇ ù³ԿÇ Ò»íñ ³»	ùñáñáóÓ· և, ³é- ՍáðÍÇ · óÉÇ ÍéÍÇ í»ê³ñ³ԿÁ
	1.6		Դ³á³Կ³ù³ñ	1645 Ա.		ê»Õ³Կ³Ó· և, ÉԿáðՍùÇ í»ê³- ñ³ԿÁ
	1.7		Դ³á³Կ³ù³ñ	16-17 ¹¹ .		μ³ñÕñ և, ù³Կ¹³í³¹²³ñ¹
	1.8		Դ³á³Կ³ù³ñ	16-17 ¹¹ .	áñՍÝ³÷³Í É³áù³ñÇó ՍÇ ù³ԿÇ Ò»íñ Ñí-³Ս	μ³ñÕñ և, í³ñ áð ó³ԿùÇ í»ê³ñ³ԿÁ
	1.9		Դ³á³Կ³ù³ñ	16-17 ¹¹ .	áñՍÝ³÷³Í É³áù³ñÇó ՍÇ ù³ԿÇ Ò»íñ ³»	μ³ñÕñ և, ÉԿáðՍ- ùÇ í»ê³ñ³ԿÁ
1	2	3	4	5	6	7

5.1. Ազդեցությունը մթնոլորտային օդի վրա

Մթնոլորտային օդի վրա նախատեսվող երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ազդեցությունը լինելու է նվազագույն:

Համաձայն ՀՀ կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N1673-Ն որոշման՝ տեղանքում մթնոլորտային օդի ֆոնային աղտոտվածության վերաբերյալ տեղեկատվությունն ստացվում է Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության կայքից: Եթե տվյալ բնակելի տարածքի համար համապատասխան տեղեկատվությունը ֆոնային աղտոտվածության վերաբերյալ բացակայում է, ապա 250000 մարդուց պակաս բնակելի տարածքների համար ֆոնային աղտոտվածության խտություններն ամենատարածված աղտոտող նյութերի համար ընդունվում են՝ ծծմբի երկօքսիդի համար՝ 0.1 մգ/մ³, ազոտի օքսիդների համար՝ 0.03 մգ/մ³, ածխածնի օքսիդի համար՝ 1.5 մգ/մ³, չտարբերակված անօրգանական փոշու համար՝ 0.2 մգ/մ³:

Հայցվող տարածքում մթնոլորտ վնասակար արտանետումների աղբյուրներն են հետախուզական փորվածքների անցումը և ճանապարհներով աշխատանքները սպասարկող մեքենայի տեղաշարժը:

Ավազակոպձային խառնուրդի ուսումնասիրության նպատակով նախատեսված հետախուզական փորվածքների անցումից փոշու արտանետումներ չեն առաջանակում քանի որ ԱԿԽ-ի կուտակը գտնվում է խոնավ վիճակում:

Հայցվող տարածքում կանխատեսվում է 0.1գ/վրկ փոշու արտանետում, որը կրելու է կարճատև բնույթ:

5.2. Ազդեցությունը ջրային ռեսուրսների վրա

Այրիգետի բնական հոսքի վրա ազդեցությունները բացառելու նպատակով գետի հունի և հետախուզական փորվածքների միջև նախատեսվում է թողնել 10մ բնամաս: Նախագծված փորվածքները տեղադրվելու են գետից 10-27մ հեռավորության վրա (գծագրական հավելված 1): Տեխնիկական և խմելու ջուրը բերվելու է Բնունիս գյուղից: Ջուրը նախատեսվում է գնել գյուղի առևտրի կետերից կամ բնակիչներից, պայմանագրային հիմունքներով: Հետագայում, պաշարների հաստատումից հետո, հանքավայրի շահագործման դեպքում, ընկերությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կդիմի ջրօգտագործման թույլտվություն ստանալու համար:

Կենցաղային կեղտաջրերը նախատեսվում է կուտակել նախապես կառուցված, բետոնապատ անթափանց ջրհորի մեջ:

5.3. Ազդեցությունը հողային ռեսուրսների վրա

Հողային ռեսուրսների վրա ազդեցություն չի դրսևորվելու, քանի որ երևակման տարածքում հողաբուսական շերտ չկա: Այն ներկայացված է ավազակոպճազլաքարային նյութի կուտակով, որը կապակցված է կավային խառնուրդով:

Հետախուզահորերի փաստագրումից և նմուշարկումից հետո կատարվելու է դրանց հետլցնում, հարթեցում, փխրեցում և լանդշաֆտի վերականգնում:

5.4. Ազդեցություն կենսաբազմազանության վրա

Երևակման սահմաններում աճում է տարախոտային բուսականություն: Դիտարկման փուլում (2022թ. մարտի սկիզբ) արձանագրվել է բազմաթիվ չորացած ցողուններ: Տարածքում աճում է նաև գաճաճ մասրենու 4 թուփ: Հետախուզահորերը տեղադրվելու են այնպես, որ թփերը աշխատանքների այս փուլում չվնասվեն:

Կենդանիների համար ծրագրավորվող աշխատանքների հետ կապված աղմուկն ու թրթռումները հանդիսանալու են անհանգստացնող կարճատև գործոն:

Հայցվող տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների կարմիր գրքերում գրանցված տեսակներ չեն դիտարկվել:

Երևակման տարածքը չի հանդիսանում բնության հատուկ պահպանվող տարածք: «Զանգեզուր» պետական արգելավայրը գտնվում է երևակման տարածքից մոտ 15կմ, Գորիսի արգելավայրը՝ մոտ 21կմ հեռավորության վրա:

Երևակման տարածքում, ինչպես նաև մոտակա Ախլաթյան, Տոլորս, Բնունիս և Աշոտավան գյուղերի տարածքում բնության հուշարձաններ հաշվառված չեն :

Հայցվող տարածքից մոտ 15կմ հյուսիս-արևմուտք գտնվում է «Անտակ լիճ» բնության հուշարձանը, մոտ 13կմ հյուսիս՝ «Անանուն» աղբյուրը (Շաքի գյուղի հս-արմ ծայրամասում, ծ.մ-ից 1685 մ բարձրության վրա), մոտ 12կմ հյուսիս-արևմուտք՝ Շաքիի ջրվեժը և «Հերթ» որմնաքանդակը, մոտ 10կմ արևելք՝ «Շամբի» բրածո ֆլորա և ֆաունա հուշարձանը:

Հետևաբար, պահպանվող էկահամակարգերի վրա որևցե ազդեցության աշխատանքների արդյունքում չի դրսևորվելու:

5.5. Աղմուկ և թրթռումներ

Ծրագրավորվող երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների անբարենպաստ ներգործություն ունեցող գործոններից մեկը առաջացող աղմուկն է: Հատկապես կարևորվում է աղմուկի մակարդակի ուսումնասիրությունն ու գնահատումը մոտակա բնակավայրի տարածքում:

Ըստ գործող նորմատիվ պահանջների, աղմուկի թույլատրելի մակարդակը բնակելի գոտում կազմում է 45 դԲԱ:

Աղմուկի ազդեցությունը մոտակա Բնունիս և Ախլաթյան բնակավայրերում գնահատելու նպատակով կատարվել են հետևյալ հաշվարկները:

Տեղամասի տարածքում աղմուկի առաջացման աղբյուրը աշխատանքները սպասարկող բեռնատար մեքենայի տեղաշարժն է և հետախուզահորերի անցման համար կիրառվող էքսկավատորը:

Երևակման տարածքում գումարային հաշվարկային ձայնային բնութագիրը՝ LAէկվ ընդունված է 60դԲԱ:

Աղմուկի մակարդակը աղմուկից պաշտպանող տարածքի հաշվարկային կետում որոշվում է՝

$LA_{տար} = LA_{էկվ} - \Delta LA_{հեռ} - \Delta LA_{էկր} - \Delta LA_{կանաչ}$ բանաձևով, որտեղ՝

LAէկվ - աղմուկի աղբյուրի ձայնային բնութագիրը, LAէկվ=50դԲԱ,

$\Delta LA_{հեռ}$ - աղմուկի մակարդակի նվազումը հաշվարկային կետի և աղմուկի աղբյուրի միջև հեռավորությունից կախված, $\Delta LA_{հեռ}$ կազմում է 10դԲԱ,

$\Delta LA_{էկր}$ - աղմուկի մակարդակի նվազումը էկրանով (բացահանքի տարածք), $\Delta LA_{էկր}$ = 10դԲԱ,

$\Delta LA_{կանաչ}$ - աղմուկի մակարդակի նվազումը կանաչ գոտիով, $\Delta LA_{կանաչ}$ = 5դԲԱ:

Աղմուկի մակարդակը Բնունիս և Ախլաթյան գյուղերի մոտ կկազմի՝

$La_{տար} = LA_{էկվ} - \Delta LA_{հեռ} - \Delta LA_{էկր} - \Delta LA_{կանաչ} = 50 - 10 - 10 - 5 = 25$ դԲԱ (նորման 45դԲԱ):

Գիշերային ժամերին արդյունահանման աշխատանքներ տեղամասի սահմաններում չեն կատարվելու:

Ուսումնասիրության աշխատանքների տեխնոլոգիական գործընթացների հետ կապված առաջանալու է առաջին կարգի տրանսպորտային թրթռում (վիբրացիա), որը կապված է տեղաշարժվող ինքնագնաց և կցորդային մեքենաների, տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: Թրթռումների սահմանային թույլատրելի մակարդակը Z առանցքով չպետք է գերազանցի 115դԲԱ, իսկ X-Y առանցքներով՝ 112դԲԱ:

5.6. Ընդերքօգտագործման թափոններ

Բնունիսի երևակման տարածքում հողաբուսական շերտ չկա: Մակաբացման ապարներ նույնպես չեն առաջանալու:

Էքսկավատորի և բեռնատար մեքենայի աշխատանքի տեխնոլոգիական գործընթացի հետ կապված կարող են ձևավորվել են մի շարք արտադրական թափոններ, այդ թվում.

Աղյուսակ 16.

Հ/Հ	Թափոնի անուն	Ծածկագիր	Քանակ	Քիմիական կազմ
1	2	3	4	5
1.	Բանեցված դիզելային յուղեր	54100203 02 03 3	Մոտ 5լ/տարի	յուղ 95.0%, մեխանիկական խառնուրդներ 1.8%, ջուր 3.2%
2.	Բանեցված շարժիչների յուղերի թափոններ	54100201 02 03 3	Մոտ 5լ/տարի	յուղ 94.6%, մեխանի- կական խառնուրդներ 2.1%, ջուր 3.2%
3.	Յուղոտված լաթեր	58200600 01 01 4	Մոտ 1կգ/տարի	գործվածք 81-84%, յուղ 10-14%, ջուր 3-6%
4.	Կենցաղային չտեսակավորված աղբ	91200400 01 00 4	Մոտ 1տ/տարի	Ապակի, փայտ, թուղթ, կտոր, սննդի մնացորդ, պլիմերներ
5.	Բանեցված անվադողեր	57500200 13 00 4	2 հատ/տարի	բութադիենային կաուչուկ 97-99%, պողատ 1-3%

5.7. Պատմամշակութային միջավայր

ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2322-Ն և 2007 թվականի մարտի 15-ի թիվ 385-Ն որոշումներով հաստատվել է ՀՀ Սյունիքի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը:

Հայցվող տարածքին ամենամոտ գտնվող հուշարձանը Բնունիս գյուղի հյուսիսային եզրի գերեզմանոցն է: Երևակման և հուշարձանի միջև հեռավորությունը կազմում է մոտ 1.4կմ:

Հետևաբար, պատմամշակութային հուշարձանների վրա որևիցե ազդեցություն արդյունահանման աշխատանքների հետևանքով չի դրսևորվելու:

5.8. Սոցիալ-տնտեսական ազդեցություն

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում հարակից բնակավայրերի բնակիչները կարող են գործ գտել համալիրի սպասարկման բնագավառում (սննդամթերթի մատակարարում, տեխնիկայի և ավտոմեքենաների սպասարկում):

«Գրին Ռոդ» ՍՊ ընկերությունը նախատեսում է մի շարք սոցիալական աջակցության ծրագրեր, ինչի նպատակով կատարվում է համայնքի տնտեսական զարգացման ուղղվածության և հնարավոր զարգացման ուղղությունների վերաբերյալ ելակետային պայմանների հավաքագրում: Աջակցության հարցերը կքննարկվեն բնակավայրերի վարչական ներկայացուցիչների և խոշորացված համայնքի ղեկավարի հետ:

6. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ,

ՉԵԶՈՔԱՑՄԱՆ ԵՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- Վառելիքի հիմնական լիցքավորման և քսայուղերի փոխարինման աշխատանքները կատարվելու են հարակից բնակավայրերի լիցքավորման կայաններում, որտեղ առկա են համապատասխան պայմաններ:
- Մեքենաների տեխնիկական սպասարկում հարակից բնակավայրերի համապատասխան ծառայություններ մատուցող կազմակերպություններում, որտեղ առկա են անհրաժեշտ պայմաններ:
- Նավթամթերքների, նավթամթերք պարունակող մնացորդների և մաշված անվադողերի պահեստավորում և պահում Բնունիսի երևակման տարածքում չի կատարվելու:
- Արտաթորվող թունավոր նյութերի չեզոքացուցիչ սարքերի տեղադրում:
- Փոշենստեցման նպատակով ճանապարհի ինտենսիվ ջրում տարվա չոր և շոգ եղանակներին: Ըստ գործող նորմատիվների՝ $1մ^2$ տարածքի ջրցանման համար անհրաժեշտ տեխնիկական ջրի քանակը կազմում է 1,5լ: Անհրաժեշտ տեխնիկական ջրի ծավալը կորոշվի օրական կտրվածքով՝ կախված աշխատանքների վայրից, ծավալից, եղանակային պայմաններից: Տեխնիկական ջուրը գնվելու է մոտակա բնակավայրերում: Երևակման տարածքում ջրցանում չի նախատեսվում, քանի որ ավազակոպճային խառնուրդը ամբողջ տարի խոնավ վիճակում է:
- Կեղտաջրերի հավաքում հորատիպ զուգարանում, որը աշխատանքների ավարտից հետո դատարկում են հատուկ ծառայության ուժերով, իսկ արտաքնոցի հորը լցվում է քարերով:
- Աշխատանքների դադարեցում Այրիգետի վարարման շրջանում: Այդ ժամանակահատվածում կատարվելու են միայն գետի դինամիկայի դիտարկումներ:
- Հետախուզահորերի տեղադրում Այրիգետից առնվազն 10-ական մետր հեռավորության վրա:
- Կենցաղային աղբի համաքում հատուկ անթափանց տարողություններում, աղբահանության պայմանագրի կնքում տարածաշրջանում գործող օպերատորի հետ, աղբահանության վճարի հաշվարկում և վճարում:

- Օգտագործվող տեխնիկական միջոցների շարժիչների կարգավորում՝ աղմուկի նվազեցման, շրջանի կենդանական աշխարհի վրա բացասական ազդեցության բացառման նպատակով:

- Հետախուզական հորերի հետլցման աշխատանքներ, ինչը թույլ կտա վերականգնել տեղամասի լանդշաֆտային ամբողջականությունը: Հետլցման աշխատանքներից հետո նախատեսվում է հարթեցնել և փխրեցնել տարածքը: Այդ աշխատանքների համար կհատկացվի 100.0 հազ.դրամ:

- Երկրաբանական քարտեզագրման, երթուղիների կատարման ժամանակ տարածքի դիտարկում թռչունների բների հայտնաբերման նպատակով: Առկայության դեպքում, դրանց տեղափոխում աշխատանքների տարածքից դուրս:

- Երթուղիների ընթացքում երկրաբանի կողմից ձեռնափայտով կամ երկրաբանական մուրճով կատարվելու են հարվածներ տեղամասի մակերևույթին, ինչը ստեղծելու է հարվածային ալիքներ և դառնալու է անհանգստության և տարածքը լքելու պատճառ սողունների համար: Այս միջոցառումը թույլ կտա բացառել մարդ-կենդանի հանդիպումից:

- Աշխատանքներին մասնակցող մասնագետների իրազեկում տեղամասի տարածաշրջանում հայտնի ՀՀ բույսերի և ՀՀ կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակների վերաբերյալ:

- «ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի թիվ 781-Ն որոշմամբ սահմանված դեպքերում՝ ըստ կիրառելիության, բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության միջոցառումների իրականացում:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ներկայացնելիս ընկերության կողմից գործունեության հայտում և հետագայում՝ գնահատման հաշվետվության մեջ ներառվում և հետագայում իրականացվում են հողերում առկա օբյեկտների պահպանությանն ուղղված հետևյալ միջոցառումները՝

1) վայրի բուսատեսակների և դրանց պոպուլյացիաների վիճակի ուսումնասիրության (տեսակային կազմ, տարածվածություն, քանակ) իրականացում, որի տվյալները սահմանված կարգով տրամադրվում են բուսական աշխարհի պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում լիազորված պետական մարմնին.

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ արգելված թունաքիմիկատների օգտագործման կանխարգելում:

Հողերում Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գրքում (այսուհետ՝ կարմիր գիրք) գրանցված տվյալ բուսական տեսակի նոր պոպուլյացիաների հայտնաբերման դեպքում դրանց պահպանության նպատակով նախատեսվում է՝

1) առանձնացնել օգտագործման նպատակով տրամադրված տարածքում պահպանվող գոտիներ, որոնք ունեն տեղական նշանակություն և անհրաժեշտ են կարմիր գրքում գրանցված բուսատեսակների՝ սույն կետում նշված նոր պոպուլյացիաների կենսունակության ապահովման նպատակով.

2) ժամանակավորապես սահմանափակել առանձնացված պահպանվող գոտիներում տնտեսական գործունեության որոշ տեսակներ, եթե դրանք կարող են բերել նշված բուսատեսակների աճելավայրերի վիճակի վատթարացմանն ու պոպուլյացիաների կենսունակության խաթարմանը.

3) սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված միջոցառումների իրականացման անհնարինության դեպքում կարմիր գրքում, որպես տվյալ բույսի աճելավայր չգրանցված տարածքներից, բույսերի բնական վերարտադրության նպատակով տեղափոխում են տնտեսական գործունեության արդյունքում ոչնչացման սպառնալիքի տակ գտնվող բույսերի առանձնյակները տվյալ տեսակի համար նպաստավոր բնակլիմայական պայմաններ ունեցող որևէ բնության հատուկ պահպանվող տարածք կամ բուսաբանական այգիների տարածք, կամ կարմիր գրքում որպես տվյալ բույսի աճելավայրեր գրանցված որևէ տարածք, իսկ բույսերի սերմերը տրամադրում են համապատասխան մասնագիտացված կազմակերպությանը՝ գենետիկական բանկում պահելու և հետագայում տեսակի վերարտադրությունը կազմակերպելու նպատակով:

- Ճանապարհներից դուրս տեխնիկայի տեղաշարժի բացառում :
- Աղմուկի մակարդակի պարբերական վերահսկում:
- Պատահական գտածոների ընթացակարգի կիրառում՝ հետևյալ միջոցառումների իրականացման միջոցով.

✓ համապատասխան անձնակազմի և պայմանագրով աշխատողների ուսուցում պատահական հնագիտական գտածոների ճանաչման, դրանց հետ վարվելակերպի և արձագանքի ուղղությամբ;

✓ գտածոների ուսումնասիրություն հրավիրված հնագետների կողմից, որպեսզի վերջիններս ուղղորդեն հնագիտական գտածոների ճանաչման և արձագանքման գործընթացը,

- ✓ արձանագրությունների կազմում պատահական գտածոներին արձագանքելու համար, ներառյալ աշխատանքի ժամանակավոր դադարեցումը գտածոների հայտնաբերման վայրում;
- ✓ պետական մարմինների ծանուցում,
- ✓ պատահական գտածոների գնահատման և պեղումների արագացված ընթացակարգերի կիրառում, ազդեցությունների սահմանափակման համար, միաժամանակ նվազեցնելով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ուշացումները:

Տեղամասում տեղադրվելու է շարժական վագոն-տնակ, աշխատակիցների հանգստի և սննդի ընդունման համար հարմարավետ պայմաններ ստեղծելու նպատակով: Նախատեսվում է լվացարան, ջրցուղարան չի նախատեսվում, քանի որ բոլոր աշխատակիցները երեկոյան վերադառնում են իրենց բնակության վայրը: Սա նաև թույլ կտա նվազեցնել կենցաղային կեղտաջրերի արտահոսքը :

7. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ (ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ) ՊԼԱՆ

Օգտակար հանածոյի երկրաբանական ուսումնասիրության ընթացքում ընկերությունը իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ ;
2. լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի՝ մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումներ, տարին մեկ անգամ հաճախականությամբ ;
3. օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով արտադրական տեղամասի տարածքի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով մշտադիտարկումներ՝ տարեկան մեկ անգամ;
4. կենսաբազմազանության ուսումնասիրություն, նկարագրում՝ տարածքին բնորոշ վայրի բնության ներկայացուցիչների քանակ, աճելավայրերի և ապրելավայրերի տարածք, պոպուլյացիայի փոփոխություն (հստակ դիտարկան կետ նշել հնարավոր չէ, դիտարկումը կատարվելու է տեղամասում և հարակից տարածքներում) ;
5. սողանքային մարմնի ակտիվության անընդմեջ մշտադիտարկում՝ ակնադիտական գննման եղանակով, մետաղական խողովակների հատվածների (որպես ռեպեր) տեղադրում, դրանց տեղադիրքերի ֆիքսում և մշտադիտարկում:

Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման և աղտոտվածության ուսումնասիրության նպատակով վերցված նմուշների լաբորատոր հետազոտությունը նախատեսվում է իրականացնել հավատարմագրված, համապատասխան հավաստագրեր ունեցող լաբորատորիաներում: Ստացված տեղեկատվությունը ներկայացվելու է ՀՀ Շրջակա միջավայրի նախարարություն՝ ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N191-Ն որոշման պահանջներին համաձայն:

Մշտադիտարկման նպատակով ընկերությունը տարեկան մասնահանելու է 250.0հազ.դրամ:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության աղտոտման կանխարգելման մոնիտորինգի կետերի տեղադիրքը ներկայացված է ստորև նկար 12-ում:

Մշտադիտարկումների կառուցվածքները ներկայացվում է նաև աղյուսակ 17-ում:

Աղյուսակ 17.

Մշտադիտարկում- ների օբյեկտը	Ցուցանիշը	Մշտադիտարկումների տեսակը	Նվազագույն հաճախականությունը
1	2	3	4
Մթնոլորտային օդ, տեղամասի տարածք, աշխատանքների իրականացման վայր	Փոշի, ածխածնի օքսիդ, ազոտի օքսիդներ, մուր, ծծմբային անհիդրիդ	Նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն, չափումներ ավտոմատ չափման սարքերով	Աշխատանքների իրականացման վայր, շաբաթական մեկ անգամ՝ 24 ժամ տևողությամբ
Երևակման մակերես, աշխատանքների իրականացման վայր	Նավթամթերքների պարունակությունը	Նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն	Տեղամասի տարածք, ամսական մեկ անգամ
Վայրի բնություն, կենսամիջավայր, կարմիր գրքում ընդգրկված, էնդեմիկ տեսակներ. տեղամասի հարակից շրջան	Տարածքին բնորոշ վայրի բնության ներկայացուցիչների քանակ, աճելավայրերի և ապրելավայրերի տարածք, պոպուլյացիայի փոփոխություն	Հաշվառում, նկարագրություն, քարտեզագրում	Տեղամասի և հարակից տարածքներ, տարեկան մեկ անգամ
Սողանք	Ակտիվության նշաններ, ռեպերների տեղաշարժ	Ակնադիտական ուսումնասիրություն, ռեպերների կոորդինատներ	Սողանքային մարմին, արնոմեջ
Ջրային ռեսուրս, Այրիգետ	Պղտորություն	Նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն	Ամսական մեկ անգամ, Այրիգետի հոսանքով ներքև, երևակման տարածքից հետո

8. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ

Արտակարգ իրավիճակների պատրաստ լինելու համար՝ շարժական կապի միջոցների առկայություն հետախուզական աշխատանքներ իրականացնող անձնակազմի մոտ, առաջին բուժօգնության միջոցների առկայություն, անվտանգության կանոնների վերաբերյալ անձնակազմի գիտելիքների ստուգում:

Երևակման տարածքում արտակարգ իրավիճակները կարող են պայմանավորված լինեն հետևյալ գործոններով.

1) Սողանքային մարմնի ակտիվացում: Բուն հայցվող տարածքից 60-ից 205մ հեռավորության վրա, Այրիգետի հակառակ ափին գտնվում է 021-0030 սողանքային մարմինը, որը դասվել է վտանգավորության III-րդ դասին և համարվել են միջին ռիսկային (Միջազգային համագործակցության Ճապոնական գործակալություն, ՀՀ քաղաքաշինության նախարարություն, 2005):

Սողանքային մարմնի ակտիվացման նշանների դեպքում նախատեսվում է.

- տարհանել տարածքում գտնվող բոլոր աշխատակիցներին,
- անջատել երևակման տարածքում գործող մեքենաների շարժիչների գործարկումն ապահովող էլեկտրասնուցումը, հնարավորության դեպքում դրանք դուրս բերել երևակման տարածքից,
- սողանքի ակտիվացման վերաբերյալ իրազեկել սողանքին հարակից հատվածում գտնվող Ախլաթյան բնակավայրի վարչական ղեկավարին,
- սողանքի ակտիվացման վերաբերյալ իրազեկել տարածքային կառավարման մարմիններին և ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությանը:

2) Երկրաշարժ՝ հաշվի առնելով, որ Հանրապետության տարածքը գտնվում է սեյսմիկ ակտիվ գոտում : Ըստ ՀՀ քաղաքաշինության նախարարի 2006 թվականի փետրվարի 3-ի «Սեյսմակայուն շինարարություն. նախագծման նորմեր» N 24-Ն հրամանի՝ Բնունիսի երևակման տարածքը գտնվում է 1-ին սեյսմիկ գոտում, որին բնորոշ է 300սմ/վրկ² կամ 0.3g զրունտի հորիզոնական արագացման մեծություն:

Նախատեսվում է մշակել ուժեղ երկրաշարժերի դեպքում գործողությունների պլան՝ վտանգավոր տարածքներից աշխատակիցների ապահով տարհանումն իրականացնելու նպատակով: Անվտանգության տեխնիկայի կանոնների վերաբերյալ հրահանգավորում իրականացնելու ժամանակ առանձին ներկայացվելու են նաև

երկրաշարժերի ժամանակ աշխատակիցների պահվածքի կանոնները, գործողությունների հաջորդականությունը: Աշխատանքները սպասարկող կենցաղային նշանակության վազոն-տնակում նախատեսվում են առաջին օգնության դեղորայքային փաթեթներ:

3) Հրդեհներ՝ կապված մարդածին գործոնների հետ: Հրդեհային անվտանգությունն ապահովելու համար աշխատակիցները տեղեկացվելու են տեխնոլոգիական պրոցեսներում օգտագործվող նյութերի հրդեհավտանգության վերաբերյալ: Նշանակվելու է հրդեհային անվտանգության համար պատասխանատու անձ, մշակվելու է հրդեհի դեպքում անձնակազմի գործողությունների պլան: Տեղամասում՝ հատուկ հատկացված վայրում տեղադրվելու են հրդեհաշիջման սկզբնական միջոցներ՝ կրակմարիչներ, ավազով արկղ, բահ:


4) Անբարենսպաստ օդերևութաբանական պայմանների (քամու արագացում, անհողմություն, անոմալ բարձր շոգ կամ ցուրտ, թանձր մառախուղ, ամպրոպ): Անբարենսպաստ օդերևութաբանական պայմանների իհայտ գալու դեպքում կիրառվում են հետևյալ միջոցառումները (ըստ իրավիճակի).

- ավելացվում է կատարվելիք ջրցանք,
- կրճատվում է աշխատանքի տևողությունը,
- կրճատվում է միաժամանակ աշխատող մեքենաների և մեխանիզմների քանակությունը,
- բեռնատար մեքենաները կահավորվում են հատուկ մառախուղի լույսերով,
- աշխատակիցները պատսպարվում են վազոն-տնակում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. նախագծման նորմեր» N102-Ն հրաման
2. Շինարարական կլիմայաբանություն, ՀՀՇՆ II-7.01-2011
3. Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին: ՀՀ Կառավարության N 75 - Ն որոշում, 27.01.2011թ
4. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարություն:
5. Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության հրապարակումներ
6. Հայաստանի ազգային ատլաս: Հատոր Ա
7. Почвы Армянской ССР. Ред./ Р.А. Эдилян, Г.П. Петросян, Н.Н. Розов. Ереван: “Айастан”, 1976 г.
8. Հայաստանի բույսերի Կարմիր Գիրք.– 2010թ.
9. Հայաստանի կենդանիների Կարմիր Գիրք.– 2010թ.
10. Флора Армении / под ред. А.Л.Тахтаджяна. – Ереван: изд-во АН Арм ССР
11. “Растительность Армянской ССР”. Магакьян А.К.
12. “Флора, растительность и растительные ресурсы Армении”, Институт ботаники НАН РА Армянское ботаническое общество. Ереван
13. “Дикорастущие съедобные растения Армении”. А.П. Тер-Восканян, Ученые записки Ереванского государственного института.
14. “Цветущие уголки биоразнообразия”, FAO, <http://www.fao.org/3/il687r/il687r08.pdf>
15. “Деревья и кустарники Армении в природе и культуре”. Ж.А. Варданян, 1952
16. Животный мир Армянской ССР. Даль С.К, 1954
17. ՀՀ Սյունիքի մարզապետարանի պաշտոնական կայք

Հավելված 1.



Հավելված 2.

Կադաստրի տեղեկանք